

7382

Զ Ե Յ Թ Ո Ւ Ն

91(47.925)
Ա-70

Թ Ի Ֆ Լ Ի Զ
1896.

~~45335~~ C.

324n



91(47.925)

2-70

ԱՀ

Հ. Անաքելեան

2012

ԶԵՅԹՈՒՆ

ՀՀ
001
002
003
004

ՏԵՂՄԱՐԱԿԱՆ, ԱԶԳԱԴՐԱԿԱՆ ԵԻ ՎԵՐՉՈՎՆ
ՑԵՍԱԽԹԻՒՆ.



Թ Ի Փ Լ Ի Զ
Տպար. Յ. Մարտիրոսեանցի. | Տիպոգր. И. Мартirosianца.
1896,

36379-42

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տեղադրական, ազգագրական եւ վարչական տեսութիւն:

I. Սասուն և Զէջուն.—Կիլիկիայի անցեալը:

II. Կիլիկիայի գիրքը. Կիման. Լեռները, լճերը, գետերը և հաղորդակցութեան ճանապարհները:

III. Հողը, նրա արդասաւորութիւնը. բնական բերքերը, հանքային արտադրութիւնները. Բոյսեր, կենդանիներ. Հողագործութիւն, անասնապահութիւն. Վաճառականութիւն, արուեստներ. Վաճառականութիւնը անցեալում:

IV. Կիլիկիայի այժմեան վարչական բաժանմունքը. Խօզան օղու ցեղը. Ազգաբնակութեան նրկարագրութիւնը.

V. Կիլիկիայի ազգաբնակութեան թիւը. Հայերի թիւը. Գլխաւոր քաղաքները և աւանները. Հայերի կրօնական և կրթական վիճակը.

VI. Զէջունի ծագումը և պատմութիւնը. Դաշնակցական խորհուրդը:

VII. Զէջունցիների նկարագրութիւնը. Նրանց կեանքի բնաւորոշ գծերը:

VIII. Զէջունի սովորութիւնները, կենցաղը. Բարքերը, հազուստը:

Дозволено цензурою. Тифлисъ, 10-го июля 1896 года.

13121.58 9



Սասուն և Զեյթուն. — Կիլիկիաի անցեալբան

Սասունից յետոյ Զէլիթունն է այժմ իր վրա
դարձնում ընդհանուրի ուշագրութիւնը: Երկու-
սի մէջ մի զարմանալի նմանութիւն կայ թէ
տեղի, թէ բնութեան, թէ գիրքի և թէ բնա-
կիչների կողմից: Եթէ Սասունը կազմում է Տարօ-
նի գահուքը, Զէլիթունը կազմում է Կիլիկիալի
կամ Տաւրոսի գահուքը: Երկուսն ևս լեռնալին
են, անձուկ և անմատչելի ձորակներով, կա-
պանքներով, խոլ վալերով. երկուսի բնակիչ-
ներն ևս քաջ, յանդուդն, համարձակ ու կիսա-
վալենի են. երկուսի պատմութիւնն ևս կորած
է ժամանակի մժութեան մէջ: Երբ Տարօնի
աշխարհը ընկճվեց բռնակալութեան լուծի տակ,
երբ ազատութեան և անկախութեան վերջին
կայծն ևս մարեց, մի բուռն քաջ ժողովուրդ,
որ չէր կարող համբերել և տանել բռնակալու-
թիւնը, ապաստանեց Սասունի անառիկ սարե-

ու գործ առ մոտ այս բար առ առ առ առ առ առ:

առաջան մասին մասին մասին մասին մասին մասին
(Արտատպած «Մշակ» լրագրից մի քանի յաւելումներով):

առաջան մասին մասին մասին մասին մասին
առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ

առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ

րում: Եթե կործանվեց Ռուբինեանց թագաւորութիւնը և Կիլիկիան վերջնականապէս տապալվեց իսլամի լուծի տակ, ազատութիւն սիրող ոգիներն ապաստանեցին Զէլթունի բարձրաբերձ և անառիկ բնական ամրութիւնների մէջ:

Իսկապէս Զէլթունը Կիլիկիայից դուրս է, որովհետև, առաջին՝ նա Տաւրոսի լեռների միւս կողմն է գտնվում, երկրորդ՝ ներկայումս իր վարչական կազմակերպութեան կողմից մտնում է Հալէպի (Բերիայի) վելայէթի մէջ, իբրև Մարաշի սանցակի կամ միւթասարբֆութեան 4 կազաներից մինը, մինչ Կիլիկիա իր մեծագոյն մասով պատկանում է Ատանայի վելայէթին. բայց որովհետև Զէլթունի ամբողջ պատմական անցեալը սերտ կերպով կապված է Կիլիկիայի հետ, մէնք ստիպված ենք կանխապէս մի համառօտ ակնարկով ծանօթացնել «Մշակի» ընթերցողներին Կիլիկիայի հետ:

Կիլիկիան գտնվում է Փոքր-Ասիայի հարաւ-արևելեան ծայրում, Միջերկրական ծովի ափերի վրա, Կիպրոս կղզու հանդէպ, շրջապատված Տաւրոս լեռների շղթաներով: Նա իր դիրքի և բնութեան պատճառով բաժանվում է

երկու մասի. հարաւ-արևելեան մասը, որ մի ընդգրածական գաշտավայր է ներկայացնում, կոչվում է Գաշտավին Կիլիկիա կամ «Չուխուր-օվա» (ումանց ասելով այս գաշտը՝ չոմերոսի «Խիական»-ում երգուած Ալէյեան գաշտն է): Իսկ արևմտեան մասը, որ անհարթ, ժայռոտ և լեռնոտ մի երկիր է, կոչվում է Քարուտ Կիլիկիա:

Իր անզուգական դիրքի համար, գտնվելով Եւրոպայի և Ասիայի մէջտեղ և շատ մօտ Աֆրիկային (Եգիպտոսին), Կիլիկիան ահագին դեր է խաղացել մարդկութեան պատմութեան մէջ: Թէկ նրա բնական սահմանները, հիւսիսային և արևմտեան կողմից՝ Տաւրոսեան լեռների երկայնապատ կամարաձև զօտիներն են (այդ լեռները այժմ կոչվում են Պուլզար դաղը), բայց լեռների միւս կողմն ևս՝ Սարս և Զահան գետերի նեղ հովիտներում գտնված վայրերը, որոնց մէջ և Զէլթունը, համարվում են Կիլիկիայի մասը:

Կիլիկիայի անցեալը: Կիլիկիայի ամենահին ժամանակների պատմութիւնը մթութեան մէջ կորած է: Նա լիշվում է հոմերական քերթուածների մէջ և լունական հանճարը ստեղծաբաննել է նրա մասին զանազան առասպեկներ: Այս յայտնի է սակայն, որ նա ամենահին դարերում Փոքր-Ասիայի ամենավաճառաշաշակ և բարգաւաճ երկիրներից մինն էր և

Հուշակաւոր իր ծովալին վաճառականութեամբ
ու Տարսոն երեկոյ նաւահանդիստ — մայրաքա-
ղաքով, որի մասին լիշպած է և Սաղմոսի մէջ
Թարախա անունով: Ենթազրվում է, որ Տարսո-
նը շինվել է ՓՊ դարում Քրիստոսից առաջ:
Կիլիկեցիները իրանց իշխանութիւնը Փոքր-Ա-
սիայի մէջ տարածել էին մինչև Կապագովիլիա
և մի հզօր ազգ էին կազմում, երբ Քրիստոսից
գրեթէ 1000 տարի առաջ նուանվեցան Ասո-
րեստանից և ապա ընկան նրանց յաջորդող մա-
րաց և պարսից լուծի տակ, ունենալով սակայն
իրանց առանձին թագաւորները, որոնք կոչվում
էին Սուեննէսիս: Դարեհ Վշտասպը, երբ իր
կալտրութիւնը բաժանեց սատրապութիւնների,
Կիլիկիան սահմանեց չորրորդ սատրապութիւն, որ
վճարում էր հարկ — 500 տաղանդ տրծաթ և 360
նժոյդ: Քաերքուս, երբ արշաւեց յոյների վրա
(485 թւին Քրիստոսից առաջ), Կիլիկեցիներից
առաւ 100 նաւ և մի զօրագունդ. պատմու-
թեան մէջ մնացել է այդ զօրքի տարագի և
զէնքի նկարագրութիւնը — սաղաւարտը, վահա-
նը՝ արջառների մորթուց, տառատոկները՝ ասու-
ից, կրկնակի նվազակներ և մի սուր:

Նշանաւոր եղաւ և Մեծն Ալէքսանդրի
անցքը Կիլիկիայից, Տարոսի նեղ ճանապարհ-
ներից, երբ գնում էր Դարեհի հետ պատերազ-

մելու (333 թւին Քրիստոսից առաջ): Պարսիկ-
ները կամենում էին հրկիզել Տարսոնը, բայց
Ալէքսանդրը ազատեց այդ մայրաքաղաքը. այդ-
տեղից առաջ լսաղալով, նա գնաց մինչև Խսոս,
որտեղ հանդիպեց Դարեհին և տեղի ունեցաւ
աշխարհի բարդը որոշող հուչակաւոր պատերազ-
մը, որ Ասիայի ինքնակալութիւնը յանձնեց մա-
կեդոնացիների ձեռքը:

Ալէքսանդր Մեծի մահից յետոյ Կիլիկիան
ենթարկվեց փոխիսութիւնների: Քրիստոսի ծը-
նունից 103 տարի առաջ հոօմայեցիները վեր-
ցրին Կիլիկիան: Սուլլայի ժամանակ (92 թւին
Քրիստոսից առաջ), երբ պօնտացի Միհրդատը,
հայոց թագաւոր Տիգրանի փեսան, ասլուտամբ-
վեց չոօմի դէմ, Կիլիկիայի ժողովուրդը, որ
ձանձրացել էր չոօմին հարկատու Սելւկիացի
թագաւորների միմեանց մէջ ունեցած կախնե-
րից, իրան օգնութեան կանչեց Տիգրանին, որը
եկաւ և տիրեց այդ երկրին, բայց միայն ժա-
մանակաւորապէս: Կիլիկիան դարձաւ հոօմէա-
կան նահանգ, որ կառավարվում էր փոխ-հիւ-
պատուների կամ պրօկոնոսուների ձեռքով, որոն-
ցից մինն էր և հուչակաւոր հուետոր Ցիցերոնը:
Մեծ Կոստանդիանոսը Կիլիկիան բաժանեց երեք
նահանգների. ա) Կիլիկիա, որի մայրաքա-
ղաքն էր Տարսոն և կառավարիչը՝ մի հիւպա-

տոս (consularis), բ) Կիլիկիա, մայրաքաղաքը՝ Անագարքա և կառավարիչը՝ Եշխան-նահապետ (Praeses), դ) Քարուտ Կիլիկիա, կամ Իռավութիւն, մայրաքաղաքը՝ Սելևկիա, կառավարիչը՝ Նահապետ: Բացի այդ քաղաքներից, ուրիշ նշանաւոր քաղաքներն էին — Պօլսուէստիա, Կոռիկոս, Աղանա, Եգէա, Մամետիա և այլն: Բյուզանդական կայսրութեան հետզհետէ տկարանալովն Կիլիկիան փոփոխաբար ընկաւ զանազան ազգերի ձեռքը, մինչև որ իններորդ դարի սկզբում արաբական խալիֆները նուաճեցին դաշտային Կիլիկիան: Սակայն իններորդ դարի վերջին քառորդում Վասիլ Ա. և յատոյ Ռոմանոս Ա., Նիկիֆօր Փոկաս և Յովհաննէս Զմշկիկ կայսրների ձեռքով Կիլիկիան նորից նուաճեց և հանվեց խալիֆների տիրապետութիւնից: Զմշկիկ, երկար պաշարումից յետոյ, առաւ Աղանա և 200,000 հոգի մահի և գերութեան մատնեց: Թրանից յետոյ յոյները մի ամբողջ դար Եշխանին Կիլիկիայի վրա, մինչև որ սելճուկեան թուրքերը 1087 թվուն Փոքր-Ասիա արշաւելով, խեցին յոյներից դաշտային Կիլիկիան:

Բայց Կիլիկիան երկար ժամանակ չը մնաց սելճուկեան թաթարների ձեռքում. շուտով վրա հասաւ խաչակիրների արշաւանքը և 1097 թվ

օդոստոսին Տարսոնը ազատվեց նրանցից, իսկ շուտով խաչակիրները գրաւեցին և արևելեան Կիլիկիայի բոլոր քաղաքները: Սակայն բիւզանդական կայսրները գրգռվելով նախանձից՝ իրանք ևս արշաւեցին Կիլիկիա, սկսեցին կռիւ մղել խաչակիրների դէմ և Տարսոնն ու միւս քաղաքները միմեանց ձեռքից խելել:

Հայերը, որ արդէն մի քանի ժամանակից ի վեր մտել էին Կիլիկիա, այելի համարձակութեամբ սկսեցին տիրանալ երկրին, գրաւեցին Տարսուի ամրոցները ու բերդերը, և ամրացրին Ռուբինեանց թագաւորութիւնը: Այդ հարստութեան հիմնադիրն եղաւ 1081 թվուն Ռուբէն, որը կոչվում էր սասունցի, Սասունի կողմերից ծագած լինելու պատճառով: Ռուբինեանց հարստութեան առաջին թագաւորների — Ռուբէնի, Կոստանդի և Լեոն առաջինի ժամանակ, հայերը նուաճեցին վերջնականապէս և խլեցին յունաց ձեռքից Տարսոն, Աղանայ, Պօլսուէստի, Անաբարգա և այլ քաղաքները: Լեոն Երկրորդի և Հեթում Առաջինի թագաւորութեան ժամանակ Կիլիկիան, որ ստացել էր Փոքր-Հայք անունը, ծաղկած վիճակի մէջ էր և Ռուբինեան հարստութիւնը բաւական զօրեղացած: Լեոն Բ. նուաճեց զրեթէ ամբողջ Կիլիկիան, բարեկամական յարաբերութիւններ սկսեց խա-

շակիրների հետ և Կղէմէս ԱԱ պապի աջակցութեամբ իր իշխանութիւնը փոխեց թագաւորութեան: Հայկական կիլիկեան տէրութիւնը ունեցաւ մի հարուստ կրօնական, պատմական և բանաստեղծական գրականութիւն և նա, շնորհիւ իր կուլտուրալի, զուցէ ժամանակով կարողանար զառնալ եւրոպական քաղաքակրթութեան կենտրոնուն Սսխայում, բայց մնալով միայնակ, շրջապատված զարհուրելի թշնամիներով, թաթար և թիւրքմէն ցեղերով, նա չը կարողացաւ երկար դիմանալ, և արդէն Լևոն Գ-ից սկսած հայկական այդ նոր թագաւորութիւնը սկսեց տկարանալ, այնպէս որ Լուսինեան ցեղի թագաւորների օրով, հայերի ձեռքին մնացել էին Տաւրոսի լեռներում միայն մի քանի բերդեր և ամրոցներ: Լուսինեան Լևոն Զ-ի մահուամբ Կիլիկիայի մէջ դադարեց հայոց տիրապետութիւնը, որ տևել էր մօտ 3 դար և երկիրն ընկաւ Եղիպտոսի ամիրաների ու Կարամանիայի իշխանների ձեռքը: Վերջիններս զրաւեցին ամբողջովին և լեռնոտ Կիլիկիան ու տարածեցին իրանց իշխանութիւնը, հաւանորէն, նաև Զէլթունի վրա:

Ուուրինեանց ժամանակ Կիլիկիան կամ Փոքր-Հայքը բաժանված էր 30 զլիստոր գաւառների, որոնց մէջ նշանաւորներն էին — Իս-

աւրիա, Տարսոն, Բարձրբերդ, Մոլեսն, Սիս, Մեծքար, Հարգան կամ Հաջին, Մարաշ կամ Գերմանիկ (որի մէջ Զէլթունը, թէև այս անունը այն ժամանակ ոչ մի տեղ էր միշտում), Անաւարդ կամ Անարգաբայ, Մոպտէստիա, Աղանա, Մաշկեոր, Բերդուս, Ընկուզուտ, Լարանտայ (Կարաման) և այլն: Իսկ զլիստոր քաղաքները և ամրոցներն էին — Տարսոն, Սիս (մայրաքաղաք), Լամբրոն, Անաւարդա, Մամեստիա, Ատանա, Կապան, Վահկալիքրդ, Բարձրաբերդ, Այսա, Հարգան (Հաճին), Մեծքար, Փօրնոս (Փուրնուղ), որոնցից շատը արքեպիսկոպոսական և թեմական քաղաքներ էին: Սիսը, բայց որ մայրաքաղաք էր, նաև հայոց կաթողիկոսի աթոռանիստ էր: Վանքերի թիւը 60-ից աւելի էր:

Ամբողջ երկիրը բաժանված էր 4 մեծ մասերի. 1) Լեռնային Կիլիկիա (գահոյք Կիլիկիայի), 2) Պաշտամին, 3) Քարային և 4) Դովվային Կիլիկիա:

Տասնեւհինգերորդ դարում թուրքմէնները դարձեալ արշաւեցին Կիլիկիայի հիւսիսային կողմը, մինչ Կարամանիայի թաթար ցեղը տիրում էր լեռնոտ Կիլիկիային: Սակայն այդ միջոցին զօրեղացել էին օսմաննեան սուլթանները, և 1482-ին սուլթան Բայզետը չնչեց Կարամաննեան իշ-

իսանութիւնը, և այդպիսով 15-րդ դարի վերջում Կիլիկիան ընկաւ օսմանեան տիրապետութեան ներքոյ: Ամբողջ երեք դար օսմանցիները տիրում էին այդ երկրին անխափան, երբ յանկարծ ներկայ 19-րդ դարի սկզբում սուլթանի վաստակ, Եգիպտոսի Մահմեդ-Ալի խէղիվը պատերազմ հրատարակեց սուլթանի դէմ և 1832 թ. նուաճեց Կիլիկիան և միացրեց Եգիպտոսի հետ: Սակայն երօպական մեծ պետութիւնները միջամտեցին և 1840-ին Լօնդոնում կնքված դաշնայրութեան դօրութեամբ, խէղիվը ստիպվեց նորից Կիլիկիան թողնել թուրքերին: Դրանից յետոյ Կիլիկիան վերջնականապէս անցաւ Թուրքիայի ձեռքը:

Միտոյն մի քանի լեռնական թափառական ցեղեր, մանաւանդ Խօզան կամ Քօչան-օղլու ցեղը, Սիսի հրատառմ, իրանց իշխանութեան տակ էին ձգել Միտոյն և ապստամբվելով օսմանեան պետութեան դէմ, կամ ոչինչ կամ շատ քիչ հարկ էին վճարում. նոյնպէս և Զէյթունի, Հաճինի, Պէլլան և Վետալու սարերի հայերը կեռա-անկախ վիճակ ունէին մինչև 1866 թիւը, երբ թէ Խօզան-օղլու ցեղի և թէ հայերի այդ կիսա-անկախութիւնը վերջնականապէս խեղդվեց, թէև ազատութեան կայծը բոլորովին ըլմարեց:

II

Կիլիկիայի դիրքը. Կլիման. Լեռները, լճերը, գետերը և հաղորդակցութեան ճանապարհները:

Կիլիկիան գտնվում է լայնութեան 36—38 և երկայնութեան 32—37 աստիճանների տակ: Նրա բնական սահմաններն են—հարաւից՝ Միջերկրական ծովը, որ կտրատելով նրա ափերը կազմում է խորշեր և ծոցեր, ինչպէս Տարսոնի ծոցը, Ալէքսանդրէտիլ ծոցը, որ առաջ կոչվում էր Իսսոսի ծոցը, իսկ Ոտուբենեանց ժամանակ՝ Հայոց ծոց կամ ծով: Արևելքից՝ Ամանոսի լեռնաշղթան, որ վերջանում է Բրա-էլ-խանձիր (Խողի գլուխ) հրուանդանով (Հռոսիկիսն հրուանդան հնումն): Հյուսիսից և արևմտաքից՝ Տաւրոսի սարերի գօտիով: Իր այդ դիրքի և այն հանգամանքի շնորհիւ, որ նա ընկած է Միջերկրական ծովի հյուսալին ափում, պէտք էր կարծել, որ նա կունենայ ամենառողջ և բարեհնառն կլիմայ. սակայն, դժբախտաբար, Կիլիկիայի (գաշտալին) օդը ոչ միայն առողջարար չէ, այլ և համարվում է վերին աստիճանի տեսնդոտ: Այդ համ-

բաւը դաշտային Կիլիկիան վայելում էր և առաջ, և դրա պատճառն այն է, որ ձմեռը՝ չորս ամիս անընդհատ անձրև է գալիս, ջուրը փովում է ահազին տարածութեան վրա, իսկ երբ ամառը սկսվում է՝ լեռնալին մասերից ձիւնը և սառոցը հալելով, հոսում են ցած, վարարում և ծածկում դաշտերը ու բազմաթիւ ճահիճներ ձևացնում:

Ամառը սաստիկ տօթ է լինում. ամենեխն անձրև չէ գալիս. ճահիճների մէջ լճացած ջուրը ոչ մի հոսանք չը գտնելով, գոլորշիանում է տօթից և զանաղան միազմներ արձակում ութունաւորում օգր: Այդ հանգամանքը ստիպում է դաշտային բնակիչներին՝ դեռ մայիսի սկզբում՝ բարձրանալ և ապաստանել լեռների մէջ: Ճմեռը համարեա ձիւն չէ տեսնվում. եկածն իսկոցն և եթ հալվում է:

Այս բոլորը վերաբերում է դաշտային Կիլիկիային, մինչ լեռնային Կիլիկիան, որի հետ և Զէլժունը, աղատ լինելով այդ աննպաստ պայմաններից, զուարձալի և առողջարար օդ ունի: Ի հարկէ, եթէ հոդ տարվէլ ճահիճները արուեստական կերպով չորացնելու, եթէ ջրանցքներ շինվէին, ինչպէս արել է Անգլիան Կիպրոս կղզու վերաբերմամբ՝ ոչ միայն օդը կը մաքրուէր, այլ և Կիլիկիան օդի կողմից ամենա-

գովասում և առողջարար մասնաւոր մի լինէր, որովհետև ամառը տաքութեան աստիճանը ամենաշատը 25° է լինում:

Լեռները: Կիլիկիաի բուն և հոչակաւոր լեռներն են Տաւրոսի, Անտիտաւրոսի և Ամանոս կամ Սև լեռները: Տաւրոսի սարերը ձգվում են 200 մղոն երկարութեամբ տեղ և բաղկացած են 3 գլխաւոր շղթաներից, որոնք կոչվում են
 1) Պուլղար-տաղ, 2) Տիւմբէլէկ-տաղ (Թրմբովկ լեառն), 3) Ալլահ-տաղ կամ Ալատաղ: Ամենազլխաւորը և ամենաբարձրը առաջինն է, այն է Պուլղար-տաղը (Բուլղարական սար), որ ստացել է այդ անունը Բիւզանդիայի կայսրների ձեռքով արդարեղ բերած բուլղարներից. Նրա ամենաբարձրագոյն կէտը կոչվում է Մէտտէսիզ' (11,000'): Միւս շղթաների բարձրութիւններն են 9,400' (Քօշան սարերը), 10,000' (Կէլքթէփէ), 9,000' (Ագռաւ սար) և այլն: Այդ սարերը իրանց բարձրութեան կողմից բաժանվում են 3 գահաւանդերի. առաջինը (3,500—6,000') ունի բուսականութիւն, ծածկվում է անտառով և մինչև 5,500'-ի վրա հասցնում է նաև գարի, երկրորդ գահաւանդի վրայ (6,000—9,000') չիւնը տևում է մինչև յուլիս և օգոստոս ամիսները. իսկ երրորդի վրայ (9,000'—10,000') յափտենական սառնամանիք է:

13/21. 18 (14998)

13/21. 18 (14998)



Տաւրոսը բաժանում է Կիլիկիան կապագով՝
կիալից. դէպի հիւսիս-արևելք, Փոքր-Հայքում,
մի ճիւղ է ձգում, մինչեւ Պոնտոսի տահմանները,
որը կոչվում է Անտիտարոս. խոլ դէպի Հայոց
ծոցի (Ալքամանզրէտի ծոցի) արևելեան կողմը
մի ճիւղ է արձակում, որ յայտնի է Ամանոս,
Սեւ լերինք և այժմ Կեավուր-տաղ անաւնով,
որ մեծ դեր է խաղացել Հայոց պղղային և ե-
կեղեցական պատմութեան մէջ; Սեւ լերինքը
գտնվում են արևելեան Կիլիկիայի և Ասորի-
քի մէջ: Տաւրոսի շղթաները տարածվում են
մինչեւ Վասպուրական աշխարհը: Գէպի Ասորոց
կողմը, արևմտեան Ասիա գնալու տեղը, Տաւրո-
սը ունի մի անցք, որ հոչակաւոր է պատմու-
թեան մէջ Կապանք կամ Թրունք Կիլիկիու ա-
նունով:

Անտիտարոսի լեռները այնքան բարձր չեն,
ինչպէս Տաւրոսինը և Հազիւ սրանց բարձրու-
թեան կէսն ունեն: Այդ գօտիին են պատկա-
նում Հաճինի, Ալբիստանի, Մարաշի և Զէյթունի
սարերը—Պաքըլ-տաղ, Խօզան-տաղ, Դրզըլ-տաղ,
Պարատուն և պլն:

Այդ բոլոր լեռները լի են բարձրուներով և
հանքային մեծ հարստութիւն ու ջերմուկներ են
պարունակում, որոնց մասին յետոյ կը խօսենք:
Լճեր և գետեր.—Մեծ լճեր չը կան Կի-

լիկիայում, այլ կան զանազան լճալիներ, որոնք
գոյանում են սարերի ձևների հավելուց: Գլխա-
ւորներն են՝ Գարա-կէօլ (8,000'), Քօշան-կէօլ,
որ ամառը ցամաքում է, և Զաֆրան-կէօլ կամ
Քրքումի լիճ (7,300'):

Սակայն եթէ Կիլիկիան աղքատ է լճերով,
զբա փոխարէն նա շատ առատ է գետերով և
աղբերներով, լեռների բարձրութեան և Հո-
ծութեան պատճառով: Գեռ ամենահին ժամա-
նակներից յայտնի են Կիլիկիայի մէջ վեց գե-
տեր—Առիմակղիս, Քալեքաթնոս, Լամոս, Վի-
նոս, Սարոս և Պիուամիս, որոնք թափվում են
Միջերկրական ծովի մէջ, բղնելով Տաւրոսի սա-
րերից և ներկայումս ուրիշ անուններ ունեն:
Առաջինը ամենից փոքրն է և ամենակարճը.
Երկրորդն, որ կոչվում է այժմ Սելևկիայի գետ,
անցնում է Սելևկիայի մօտից, արևմտութեց դէ-
պի արևելք և մի քանի ճիւղեր ունի: Այս գե-
տը պատմութեան մէջ նշանաւոր է նրանով, որ
նրա մէջ լողանալիս, խեղդվեց՝ 1190 թւին՝
գերմանական հոչակաւոր կայսր Ֆրէդէրիկոս
Բարբարոսան, խաչակիլիների արշաւանքի ժա-
մանակ: Երրորդն այժմ կոչվում է Լամաս, շատ
փոքր է և իր անունը առել է համանուն մի
ծովեղեայ գիւղաքաղաքից: Չորրորդն՝ Կիւտնոս,
որ այժմ կոչվում է Տարտուսչայի կամ Տարտոնի

գետ, բաւական մեծ է և իր հնութեամբ նշանաւոր: Նրա ակնը բղխում է Պուլզար-տաղից, ճանապարհին ընդունում է իր մէջ շատ գետակներ, ինչպէս Լամբրուն, Մէնէվշէ, Տէլիչայ, և մտնելով դաշտը, Տարսոնի մօտ, ստանում է այդ քաղաքի անունը: Նրա ընթացքի երկարութիւնը՝ իր ակնից մինչև ծով, 46 մորն է: Այս գետը առաջ նաւարկելի է եղել և արաբներից կոչվում էր Պէրտալ ու հոչակառը է պատմութեան մէջ նրանով, որ Աղէքսանդր Մէծը լողանալով նրա մէջ, ցրտութիւնից մահամերձ կերպով հիւանդացաւ: Ջուրը համեղ է, քաղցր է իր ակնում, և Տարսոն քաղաքի խմելու միակ աղբիւն է. բայց այժմ թունաւորուած է մի դառն և անառողջաբար ջրով, որ գալիս է մի ուրիշ գետակից: Սև ջուր կոչուած՝ և որի առաջը լոյները, արաբները և Հայերը կապել էին մի դռնով:

Մոտ 200 տարի առաջ տգէտ թիւրքերը, կարծելով որ այդ զրան ետև դանձ կայ թագ-ցրված, խորտակում են ցուռը, և Սև ջուրը աղատվելով իր կապանքից, խառնվում է Կիւդնոսի հետ: Այդ զրան մօտ գտնում են արձան, որի վրա քանդակված է լինում յունարէն հետևեալը. «Ի պատիւ և ի շնորհակալութիւն (այս անուն) ճարտարապետի, որ կարողացաւ սանձահարել և խզել այս վնասակար ջուրը,

Տարսօնացիները կանդնեցրին այս լիշատակի արձանը:»

Եյդ բոլոր գետերից մեծագոյնն է Հինդերորդ գետը, նախնեաց Սարոս, իսկ այժմ Սիէհուն կամ Սալիհուն կոչվածը, որի գետաբերանը Կիւդնոսի բերանի մօտ է: Իջնելով Խօզան սարերի մօտից երկու ձիւղերով, կաղմում է մի հզօր գետ, որը թիւրքերը Գզըլ-ըրմագ են կոչում, անցնում է Ատանա քաղաքի մօտից և թափվում ծովի մէջ: Արա ջուրը սքանչելի և բարեհամ է, առաջ նաւարկելի է եղած. այժմ ևս Կիպրոսից փոքր նաւեր են զալիս և նրա վրայով նաւարկելով հասնում են մինչև Ատանա: Ամեն յարմարութիւն ունի նաւարիկելի մեծ գետ գառնալու:

Կիլիկիայի վերջին և ամենամեծ գետն է պատմական Պիւրամիսը, այժմնան Շէհունը և Հայոց Զահանը, որի անունով կոչվում էր Մարաշի նահանգը: Շէհունը բաղկացած է Յ մասերից, հիւսիսայինը կոչվում է Խուր մա, արևմտեանը—Կոկիսոնի գետակ կամ Կէօքու, արևելեանը—Սէօկիւտլու (Ուռենուտ): Հոսելով Ալբիստան քաղաքի արևմտեան կողմից, անցնելով Զէլթունի սարերի անձուկ կիրճերով և ընդունելով զանազան վտակներ, իջնում է դէպի Մարաշ և այդտեղից ոչ հեռու ընդունելով Ազու գետակը, մտնում է Անազարբայի գաշտը,

անցնում է Մսիս կամ Մամեստիա քաղաքի մօտից և դնում թափվում է Ալէքսանդրէտի ծովախորշը։ Այս զետի վրայով հին ժամանակ նաւերը ծովից զալիս էին մինչև Մսիս, բայց այժմ աննաւարկելի է։

Պէտք է ասել, որ այդ բոլոր գետերը, սրբնթաց իշնելով բարձրաւանդակներից, իրանց հետ բերում են աւաղ, հող և այլ նիւթեր և լցնում են դաշտավայրերը. բայցի դրանից ծովի տեղատութիւնը և ալեկոծութիւնները վեր-վայր են շրջում ավերը և փչացնում նաւահանգստի յարմարութիւն ունեցող խորշերը։ Այդ հանգամանքը, որ Կիլիկիայի գետերը լեռներից հող ըերելով, ընդարձակում են ցամաքը, առիթ է տուել կարծելու, թէ մի օր Կիլիկիայի դաշտավայրը կարող է այնքան ընդարձակվել, որ կը միանայ Կիպրոսի հետ։

Դալով ծովալին և ցամաքավին հաղորդակցութեան ճանապարհներին, պէտք է ասենք, որ այն հռչակաւոր նաւահանգիստները, որոնք առաջ տմբողջ աշխարհը կապում էին և հազորդակցութեան մէջ դնում Կիլիկիայի հետ (ինչպէս Ատտալիա, Ալայա, Քալանտրոս, Զիլինդրիա կամ Կիւնար, Կոռիկոս, Սոլի կամ Փօմպէտ-պոլիս) Միջերկրական ծովի ամբողջ հիւսիսավին ափի տարածութեան վրայ և մանաւանդ հայոց

հռչակաւոր շահաստան քաղաք Այս նաւահանգիստը, որ 13 և 14-րդ դարերում աշխարհիս ամեն կողմերի և վաճառականական աղքերի հետ առևտուր ունէր,—ներկայումս կամ բոլորովին աւերալ են և կամ ամենախղճուկ դրութեան մէջ։ Կոյնպէս և գետերը դադարած են նաւարկելի լինելուց. չկան օրինաւոր կամուրջներ։ Միակ բանուկ և փոքր ի շատէ յայտնի նաւահանգիստներն են այժմ Մէրսինան և Ալէքսանդրէտը։

Երկրի ներսն էլույ երկաթուղիներ կան, ոչ խճողիներ, ոչ նոյն խակ կառաքի երթևեկութեան յարմար և փոքր ի շատէ բանուկ ճանապարհներ։ Հաղորդակցութեան միջոցներն են—ուղարքը, ձին և ջորին, խակ լեռնալին տեղերում, ինչպէս Մարտաշում, Զէլյունում, Ալբիստանում միայն ջորին, և ջորեալանները միայն զէլյունցիներն են։ Երթևեկութիւնը ազատ չէ և վտանգաւոր է համարվում թափառական, աւագակառարու ցեղերի պատճառով. ամառը դաշտային Կիլիկիան զրեթէ թափուր է լինում բնակիչներից։

Ճանապարհի սպասարկութեան մասին մասնակիութիւնը նախարարական գործութիւնների պահպանութիւնը կամ այլ առաջնահատիւնը առանձին պատճեն է և առանձին համար կազմակերպութիւն է անհանդիպ պահպանութիւնը և առանձին պատճեն է անհանդիպ պահպանութիւնը։

Հողը, նրա արգասաւորութիւնը. բնական բերքերը, հանքային արտադրութիւնները: Բոյսեր, կենդանիներ: Հողագործութիւն, անասնապահութիւն: Վաճառականութիւն, արուեստներ: Վաճառականութիւնը անցեալում:

Հողը, նրա արգասաւորութիւնը. բնական բերքերը, հանքային արտադրութիւնները: Բոյսեր, կենդանիներ: Հողագործութիւն, անասնապահութիւն: Վաճառականութիւն, արուեստներ: Վաճառականութիւնը անցեալում:

Թեր պատմական ամենահին ժամանակներից հոչակված է Կիլիկիայի, մանաւանդ դաշտային Կիլիկիայի կամ Կիւրնոս, Սարոս և Ճէլհուն գետերի հալիտների արգասաւորութիւնը, այնպէս որ շատ աշխարհազիրներ համեմատում են նրան Եղիպտոսի հետ: Հողի արտակարգ պարարտութիւնը առաջ է զալիս նրանից, որ Տաւրոսի լեռներից իջնող բաղմաթիւ գետերը և հեղեղատները ծածկում են զաշտագետինը իրանց հետ բերած հողային և կաւային շերտերով, որոնք բուսանում են ամեն տեսակ պտղատու ծառեր, հացահատիկներ և արդիւնաբերական բոյսեր: Բացի բարեխառն կիմային յատուկ զանազան պտուղներից և բանջարեղէններից, Կիլիկիայի հողը արդիւնաբերում է նաև արմատ, ձիթենի, թուրփինջ, նուշ, իսկ արդիւնաբերական

բոլսերից — մետաքս, բամբակ, կնճիթ, շաքարեղիզն, կըտաւատ, մատուտակ և աղն: Ֆաղիկների, խլոտ անտառների և այգիների մշակութեան, ինչպէս և եփած գինու և չամչի կողմից ևս մեծ հոչակ է վայելել Կիլիկիան:

Սակայն այս օրից, երբ Կիլիկիան ընկատ թիւրքաց լուծի տակ, նա կորցրեց իր այդ հոչակը: Կուլտուրան կանգ առաւ, անտառները անխնայ կերպով ջարդվեցին, այդիները, արմաւենու աշագին անտառները վայրենացան, և ամեն բան մատնից վայրագ աւերմունքի, ումի ժամանակ շէն, ամենաբերը երկիրը ներկայացնում է այժմ անխնամ, անմշակ և վարի մի դաշտ: Այդ վիճակի մէջ է զաշտային Կիլիկիան, որն այժմ արդիւնաբերում է միալն ցորեն, գարի, բամբակ, կըտաւատ, կնճիթ և մետաքս. Իսկ քարոտ Կիլիկիայում, որը մի ժամանակ, ձիթենու մշակմամբ, ձէթի մեծ առեւտուր ունէր, այսօր ձիթենիները վայրենի կրութեան մէջ՝ ահազին անտառներ են կազմում: Միայն լեռնալին Կիլիկիայում, գլխաւորապէս Զէլիթունում, մինչեւ այսօր էլ այգիները մշակված վիճակի մէջ են և արտադրում են խաղողի բազմաթիւ տեսակներ, որոնցից զէլիթունցիները պատրաստում են լազգինի, ոռոփ, պաստեղ և ընտիր չամիչ: Զը մոռանանք լիշելու և այն, որ Զէլիթունը ունի իր

սեփական բոյսերը, —քաք, որ մի թթուահամ, կարմիր, կանանչ և սպիտակ գոյն ունեցող բոյսէ, որն ուսում են կեղեռվ, և շեն կիրար, որ վարունդի մի տեսակն է, բաւական համեղ, որը չորացնելով պահում են ձմեռվայ համար: Զէլթունին յատուկ է և մուշկ ծաղիկը:

Տարակոյս ըստ կայ, որ մի փոքր ի շատէ կուլտուրական, մարդավայել, օրինաւոր կառավարութեան ներքոց Կիլիկիայի հռչակաւոր բուսական հարստութիւնը նորից կը ստանայ իր նախկին շքեղութիւնը և վարթամութիւնը ու դուրս կը գայ իր վայրենի վիճակից:

Կենդանական աշխարհը նոյնպէս բաւական մեծ հարստութիւն է ներկայացնում: Գարամանի խոյը, որ ազնիւ և ընտիր բուրդ ունի և ահազին դմակ, որը գործ է ածվում իւղի տեղ. մշկահոտ եղները, ընտիր և նուրբ մորթով. ընտանի այծը, որի բրդից գործված ցփսին Թուրինեանց ժամանակ Կիլիկիայի ամենաշահաւոր վաճառքներից մինն էր կազմում և շատ յարգի էր իտալիայում. Զէլթունի ջորիները, որոնք նշանաւոր են իրանց տոկունութեամբ. վայրի քօշը, վիթը և նոխազը, ինչպէս և կարմիր կաքաւը, որոնք կազմում են լեռնալին Կիլիկիայի ընակիչների որարդութեան դըլխաւոր առարկան. ինձը, չովազը, որոնց

մորթիները շատ յարգված են Կ. Պոլսում թամբի և համետի համար—ահա Կիլիկիայի կենդանական աշխարհի գլխաւոր ներկայացուցիչները: Գալով Կիլիկիայի լեռներին՝ նրանք արտադրում են երկաթ, արծաթ, ոսկի, կապար, արծանպ, ձիւթ, բորակ, մալախիտ և այլն: Մանաւանդ հռչակաւոր են Կիլիկիայի արծաթախառն կապարի և Զէլթունի երկաթային հանքերը: Տարոսի լեռները հրաբղացին դանդուած ունենալով, պարունակում են բազմաթիւ ջերմուկներ, որոնց մէջ նշանաւոր են Զիֆտիշանին և Զէլթունի ս. Կարապետի վանքի ջերմուկները:

Ներկայումս հանքային այդ հարստութիւնները անինամ թողված են և միայն տեղացիների նահապետական միջոցներով են շահազորդում:

Երկրագործութիւնը Կիլիկիայում՝ Թիւրքիայի տնտեսական ընդհանուր քայլայման պատճառում՝ շատ ընկած և խեղճ վիճակի մէջ է գտնվում: Բացի ընդհանուր տնտեսական պատճառներից՝ մասնաւոր տեղական պատճառներն ևս քիչ չեն ազդում այդ անկման վրա: Զը կան

ջրանցքներ. Երկիրը ծածկված է ճահիճներով. տասանորդական տուրքերը չափազանց ծանր և բազմազան են. աստանդական աւագակաբարոյ թիւրքմէն և աֆշար ցեղերի պատճառով երկրի մէջ տիրում է անապահովութիւն, — և այդ բոլոր աննպաստ պայմանների շնորհիւ Կիլիկիան հաղիւ կարողանում է նախկին արգասաւորութեան մի հարիւրերորդ մասն ունենալ: Գեռ շատ զարմանալի է, որ գարձեալ նա այնքան առատ բերք է տալիս, որ կարողանում է մինչև անգամ մի մասն ևս օտար երկիրներ արտահանել: Այժմ մշակող բոյսերն են—ցորենը, գարին, բամբակը, կտաւատը, կնճիթը, թթենին: Բամբակ արտադրվում է տարեկան 20,000 կենդինար, ցորեն—400,000 քոռ (քիլէ) և ամենաընտիրը համարվում է Գարմանի ցորենը, գարի—150,000 քոռ, կնճիթ—15 մինչև 20,000 քոռ, կըտաւատ—40,000: Չը նայելով, որ արտերը ամենանահապետական և ողորմելի կերպով են մըշակվում, դարձեալ բերքը տալիս է մէկին քսան, մէկին երեսուն:

Այգեգործութիւնը, սակայն, բաւական զարգացած է Զէլթունում, որ իր մէջ և իր շրջակայքում 3.000 այգիներից աւելի է պարունակում, և զրա պատճառն այն է, որ երկիրը եռնոտ լինելով անյարմար է հողագործութեան

և բնակիչների ապրուստի գլխաւոր աղբիւրը խաղողի այգիներն են կազմում:

Գալով անասնապահութեան պէտք է ասել, որ նա բաւական զարգացած է Կիլիկիայում, քանի որ նրա ծաղկաւէտ և բազմաբոլոս տափարակները ու բարձրաւանդակները արօտատեղերի համար մեծ յարմարութիւններ են ներկայացնում, այդ պահճառով բնակիչների մեծ մասն էլ խաշնարածութեամբ է պարապում, և Գարամանի խոյը կազմում է անասնապահութեան գլխաւոր առարկան:

Եթէ մենք այսքան մանրամասն կերպով նկարագրեցինք Կիլիկիայի պատմական անցեալը, աշխարհագրական դիրքը, գետերը, լեռները, բուսական, կենդանական և հանքային աշխարհները, այդ առանց նպատակի չէր: Մենք կամենում էինք ցոյց տալ, թէ այդ երկիրը իր դիրքով, իր արգասաւորութեամբ և բնական հարստութիւններով որպիսի ծաղկած դրութեան մէջ է եղել մի ժամանակ և որպիսի բարելաջող ու նպաստաւոր պայմաններ է ներկայացնում նոյն իսկ համաշխարհային վաճառականութեան և արդիւնաբերութեան համար: Նա հէնց այդ-

պիսի գեր խաղացել է ոչ միայն հին պատմութեան մէջ, այլ նոյն լիկ միջին դարերում, Ուռբինեանց թագաւորութեան ժամանակ, ըլ նայելով այն ժամանակվայ քաղաքական ալեկոծութեաններին, անդադար պատերազմներին. որովհետև եթէ երկիրը մի կողմից քանդվել է արտաքին պատճառներից՝ միւս կողմից շինվել է իր ներքին բարեկարգութեամբ, կարգու կանոնավ և խելացի կառավարութեամբ:

Եւ ճշմարիտ, ի՞նչ ենք տեսնում. 13 և 14-րդ դարերում վաճառականութիւնը, արդիւնահանութիւնը, արուեստները այնքան զարգացած, ծաղկած էին Կիլիկիայում, որ նրա նաւահանգիստները, որոնց զլիաւորն էր Այս քաղաքը, կենտրոնացնում էին իրանց մէջ ամբողջ Արևելքի և Արևմտաքի վաճառականութիւնը: Այսի միջոցով հին աշխարհը—Պարսկաստանը, Հնդկաստանը, Չինաստանը—կապվում էր Եւրօպայի՝ Իտալիայի, Փրանսիայի, Սպանիայի հետ: Այսի մէջ հաւաքվում էին Ասիայի խորքերից համեմներ, թանգագին ակներ, հիւսուածներ, բեհեզներ, դիակներ, շաքար, խունկ, սապոն, չուխայ, սոկի, արծաթ, լեղակ, սնդիկ, բուստ, որոնք բերում էին Փյօրենցիայի, Պաւիայի, Վենետիկի, Գենուայի, Պիզայի, Լիվոռնի, Կըրետի, Մարսէլլի, Սպանիայի, Անգլիայի և Հանսէեան

քաղաքների վաճառականները հազարաւոր նաւերի վրա, և այդ ներածութեան փոխարէն արտահանում էին Կիլիկիայից նրա սեփական բերքերը—ասր, ցփոխ, բամբակ, քաթան, երկաթ, պղինձ, սլաղեղ, մուշտակներ, ցորեն, չամիչ, զինի, քաղցաւ, փայտ, մետաքս, աղ և այլն, ինչպէս և ձի, ջորի, էշ և արջառ:

Այս անընդհատ վաճառականական յարաբերութիւնների շնորհիւ կեանքը եռում էր, երկիրը ծաղկում էր, հողագործութիւնը, անասնապահութիւնը, այգեգործութիւնը, արհեստները զարգանում և բարգաւաճում էին: Իսկ այժմ... այժմ այս ամենի տեղ տիրում է անսպատ, աւերում. թագաւորում է քիւրդի, աֆշարի և թիւրքմէնի նիզակը ու սուրը. այժմ հողը խոպանացած, ամբողջ Կիլիկիան մի անմշակ և աւերակ երկիր է ներկայացնում:

Եւ ի՞նչպէս կարող է վաճառականութիւնը ծաղկել, ի՞նչպէս կարող են արհեստները բարգաւաճել մի պետութեան մէջ, որն ոչ նոր ճանապարհներ է շինում, ոչ հին ճանապարհներն է նորսգում, ոչ նաւահանգիստներ է մաքրում, ոչ ճահիճներ է չորացնում, ոչ կամուրջներ է կառուցանում, ոչ ջրանցքներ է պահում, ոչ աւազակներին է զսպում, ոչ գոյքի և կեանքի ապահովութիւն է տալիս, այլ միայն հարստա-

մի մութէսարիֆ (գաւառապետ): Կազայի կառավարիչն է գայմագամը (գաւառապետի փոխանորդ), նահիալի կառավարիչը—միւդիթը (պրիստավ), իսկ քարիայի գլխաւորը—մուխտարը (տանուտէր): Վալին, մութէնարիֆը, գայմագամը, միւդիթը նշանակում են կենտրօնական նահանգական իշխանութիւնից, իսկ մուխտարն ընտրվում է տեղական ժողովրդից:

Թիւրքաց տիրապետութեան տակ ընկնելուց յետով, Կիլիկիան զանազան վարչական բաժանումներ է կրել. մի ժամանակ նրա մեծագոյն մասը պատկանում էր Գարամանիայի և Իչ-Իլի կուսակալութիւններին, իսկ ներկայումս նա բաժանված է երկու վիլայէթների—Աղանայի և Հալէպի, և այդ երկու վիլայէթների մէջ ամփոփում է ամբողջ պատմական Կիլիկիան, զոնէ Լևոնների և Հեթումների ժամանակայ Կիլիկիան: Մեծագոյն մասը վերաբերում է Աղանայի, իսկ փոքրագոյնը՝ Հալէպի վիլայէթին:

Աղանայի վիլայէթը բաղկացած է 4 սանցակներից կամ մութեսարիֆութիւններից և 19 կազաններից կամ գայմագամութիւններից: Ահանրա բաժանումը:

I. Ադանա սանջակ
Կապանէրը՝ 1) Ադանա, 2) Մէրսին, 3)
Տարսուս (Տարսոն), 4) Կարա-Հիսար:

II. Էջիլ սանջակ
Կապանէրը՝ 5) Սելևկիա, 6) Գիւլնար, 7)
Անամուր, 8) Երմէնէլ, 9) Մութ:

III. Խօղան սանջակ
Կապանէրը՝ 10) Սիս, 11) Ֆէկէ, 12) Հաճին, 13) Կարս:

IV. Ջէբէլ-Բէրէքէթ սանջակ
Կապանէրը՝ 14) Եարզուտ, 15) Օսմանիէ,
16) Խոլահիէ, 17) Բուլանիք, 18) Հասսա և
19) Պայտա:

Այդ 19 կազանները պարունակում են իրանց մէջ 49 նահիաններ:

Հալէպի վիլայէթը բաղկացած է 3 սանցակներից, որոնք են՝

I. Հալէպ սանջակ
Կապանէրը՝ 1) Հալէպ, 2) Ալնթար, 3)
Քիլիս, 4) Բէլան, 5) Ալէքսանդրէտ, 6) Անտիօք, 7) Հարէմ, 8) Ջեղբ-Ճոր, 9) Խոլիփ, 10) Մասրա-Նուման, 11) Բահ-Ջէբուլ, 12) Մէգին, 13) Բէկկա:

III. Աւրֆաս սանջակ

Կապահերը՝ 14) Աւրֆաս, 15) Բում-կալէ
(Հռոմկլայ), 16) Սուրաւ, 17) Բիրէճիկ:

III. Մարաշ սանջակ

Կապահերը՝ 18) Մարաշ, 19) Ալբիստան,
20) Զէլթուն, 21) Անդէրին, և 22) Պազարձիկ:
Այս 22 կազաները պարունակում են իրանց
մէջ 24 նահիաներ:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, Զէլթունի երկիրը կազմում է չալէպի վիլայէթի Մարաշ սանջակի չորս կազաներից մինը:

Այսուղ պէտք է նկատենք, որ մինչ Աղանայի ամբողջ վիլայէթը իր 4 սանջակներով ամբողջովին վերաբերում է նախկին Կիլիկիային, նոյնը չէ կարելի ամեն չալէպի վիլայէթի մասին, որի մի քանի կազաները խօսպէս չեն կազմում Կիլիկիայի մասը և գուրս են նրա սահմաններից, ինչպէս Անտիօք, Ալէքսանդրիտ, չալէպ և այլ կազաները. բայց որովհետեւ այդ վիլայէթը եկեղեցական-վարչական կողմից ենթարկում է Սփի կաթողիկոսի իրաւասութեան և թէ իր այժմեան վարչութան բաժանումով, թէ պատմական լիշտատակներով և թէ տնտեսական ու ազգագրական պայմաններով կապված է Կիլիկիայի հետ, մենք ևս վերաբերում

ենք նրան Կիլիկիային, ինչպէս արել է Հայող Ղեռնդ Ալիշանը:

Այժմեան վարչական կազմակերպութիւնը ձեւակերպիլ է 1865 թւից յետոյ և մինչև այդ թուականը լեռնային Կիլիկիան գրեթէ ամբողջովին, մանաւանդ Հանին, Սփի, Մարաշ, Ալրիստան՝ միայն անուանական կերպով օսմանեան տէրութեան մասն էին համարվում, այլ իրօք անկախ ցեղապետութիւններ էին կամ փոքր իշխանութիւններ խօզան-օղլու կրչած ցեղի տիրապետութեան տակ, իսկ Զէլթունը կազմում էր մի հայկական փոքր իշխանութիւն, ժողովրդական կառավարութեամբ, թէև դարձեալ նոյն խօզան-օղլու տիրապետութեան տակ:

Հարկաւոր ենք համարում փոքր ինչ աւելի երկարօրէն խօսել խօզան-օղլուի տիրապետութեան մասին: Այդ թիւքիմէնական ցեղը, իր տոհմապետ Քուղանի կամ խօզանի առաջնորդութեամբ, եկել է Կիլիկիա 13-րդ դարում: Սկզբում նա ինդրում է հայոց թագաւորից և ստանում է ազատութիւն արածացնելու իր հօտերը երկրի դաշտավայրերում և լեռնակողմերում. յետոյ քիչ քիչ հաստատում է այդտեղ իր բնակութիւնը, և երբ հայերի իշխանութիւնը վերացվում է, երկիրն ընկնում է Եգիպտոսի սուլթանների ձեռքը, խօզան-օղլու ցեղը, իբրև հաւատակից,

ներում, և կառավարում էին Սիս քաղաքը Իրանց ցեղին պատկանող մի թիւրքմէն բէյի ձեռքով, և Ադանալի վալին, որի իրաւասութեան տակ էր համարվում Սիսը, չէր կարողանում որ և է իշխանութիւն բանեցնել և որ և է հարկ հաւաքել:

Յայտնի հայագէտ Փրանսիացի Վիկտօր Լանգլուա, որը ճանապարհորդեց Կիլիկիացում և Սուսմ 1852-ին, Խօզան-օղլու տիրապետութեան ժամանակ, ասում է, որ նա հասնելով Սիս, ներկայացաւ հայոց կաթողիկոսին և ցոյց տուեց նրան Ադանալի միւշիրի (կուսակալի) Փիրմանը, որով իրաւոնք էր տրվում իրան ճանապարհորդելու Սիսի վիճակի մէջ. Կաթողիկոսը ժըպտաց և ասաց. «Միւշիրը Ատանալի ու Տարսունի վրա կիշխէ, իսկ լեռան տիրողը Խօզան-օղլուն է»:

«Խօզան-օղլու կոչվում է,—շարունակում է Լանգլուան—թէ Սիսի գաւառին տիրող ցեղը և թէ նրա ցեղապետը: Եւ որովհետեւ կաթողիկոսը այն բռնակալին անդադար ստակ ու ընծաներ տալով է, որ հաստատուն է մնում իր աթոռի վրա, մի կերպով նրա հսկատակն է եղել, եթիւ օսմանեան իշխանութեան ներքոյ չը լինէր: Խօզան-օղլուի ցեղից մի թիւրքմէն բէյ լեռնաբնակ իշխանների կողմից կառավարում է

ոյժ է ստանում, զրաւում է ձորերը, սարերը, և բաժանում միւս թիւրքմէն ցեղերի հետ: Եւ երբ 16-րդ դարում օսմանեան պետութիւնը առնում է Կիլիկիան Եզիլապոսի ձեռքից, նա արդէն գտնում է այլտեղ բազմաթիւ դէք է բէդին եր, այն է ձորատէրեր կամ բռնակալներ, որոնց անկարող է հանդիսանում նուաճել և դէրէբէդիները, որոնց մէջ ամենից նշանաւորը և ուժեղը Խօզան-օղլու ցեղապետներն էին, շարունակում են իրանց տիրապետութիւնը լեռնաբնակին Կիլիկիայի վրա, հօրից որդի ժառանգաբար յաջորդելով, երբեմն հաշտ ապրելով օսմանեան կառավարութեան հետ մի թեթև հարկի վճարումով, երբեմն ապստամբվելով:

Խօզան-օղլու ցեղի տիրապետութիւնը ըսկզբում տարածվում էր Սիսի, Մարաշի վրա, բայց ժամանակի ընթացքում նրանք նուաճեցին նաև Զէյթունի, Հաճինի, Պէյլանի և Կեավուր-տաղի անկախ հայ վիճակները, թէև ոչ բոլորովին, որովհետեւ նրանք բաւականանում էին մի թեթև հարկով և չէին խառնվում այդ անկախ հայերի ներքին կառավարութեան մէջ: Խօզան-օղլուի հպատակ էր համարվում և Սիսի կաթողիկոսութիւնը, որը հաստատ էր մնում ընծաներ և որոշ հարկ տալով ցեղապետին: Իրանք ցեղապետ իշխանները ապրում էին լեռ-

Սիս քաղաքը, և Աղանավի փաշան, որ Սսի կառավարիչն է համարվում, քաղաքի վրա ամենելին լշխանութիւն չունի, տուրք չէ կարողանում ժողովել և իր կողմից ոչ երբէք կարողացել է մի վիտխանորդ հաստատել»:

Իրերի այդ վիճակը տեսեց մինչև 1866 թիւր, երբ ԶԵՂԹՈՒՆԻ ապատամբութիւնից և նուաճումից յետոյ (1862—63-ին), որի մասին առանձին կը խօսենք) օսմանեան կառավարութիւնը արշաւեց Սև լեռան բնակլիչների և Խօզան ցեղի վրա, օգնական ունենալով իրան Սսի կաթողիկոսին: ԶԵՂԹՈՒՆԾԵՐ Հայերը անկարող լինելով օգնել Խօզան-օղլուն, վերջինս ստիպվեց հազարնդիւն և յանձնել թիւրքաց կառավարութեան իր երկլերները: ԹԻՒՐՔԵՐՆ ևս Խօզան-օղլու ցեղապետներին նշանակեցին նուաճված վիճակների գայնադամներ:

Այդպիսով միայն 1866-ին Կիլիկիան ստացաւ վարչական այն կազմակերպութիւնը, որ վերև առաջ բերեցինք:

Այժմ դիմենք Կիլիկիայի ազգաքնակութեան նկարագրութեան:

Կիլիկիայի այժմեան ազգաքնակութիւնը

բաղկացած է երկու գլխաւոր տարրերից՝ բնիկներից և եկւորներից: Բնիկ տարրը կազմում են Հայերը, յոյները, քիւրդերը, Հայուկ քիւրդերը, Հայասեռ պօգան ցեղը, իսկ եկւոր տարրը կազմում են՝ թիւրքէնները, աֆշարները, թիւրքերը կամ օսմանլինները, անպարի կամ նասայիրի արաբները, չէրքէզները, նասրանինները (աղանդաւոր ասօրինները) և զգլբաշները: Հայերը բոլոր միւս ցեղերի մէջ, թէ իրանց թւի բազմութեամբ, թէ իբրև երկրի ամենահին բնիկները նշանաւոր տեղ են, բռնում: Նըրանք մնացորդ են Թուրքիննեանց թագաւորութեան ժամանակի Հայերի, որոնց թիւր, սարսափելի Հարստահարութիւնների սկատճառով, 500 տարիներից ի վեր սաստիկ նուազել է:

Յոյները համարվում են Բիւզանդիայի տիւրապետութեան ժամանակ եղած յոյների սերնդից, իսկ մի մասը եկւոր է Կեսարիայից և այլ կողմերից և Հայերից հնագոյն են Համարվում: Նրանք զլսաւորապէս բնակլիւմ են քաղաքներում և պարապում են վաճառականութեամբ:

Թիւրքերը նոյնպէս Համարվում են բնիկներ, քանի որ նրանց անունը լիշպում է գեռ-9-րդ գարում, իբրև երկրի բնակիչներ, Վասիլ Տ կայսրի ժամանակ, և քանի որ բոլորն էլ թափառական վրանաբնակներ չեն, այլ կան և

Հաստատաբնակներ, ինչպէս Սև լեռներում, որը նրանց բնակութեան կենտրօնավայրն է: Կան, ի հարկէ, և եկոր քիւրդեր:

Հայուկ քիւրդերը, որոնք կազմում են մի վայրագ ցեղ, աւելի արիւնուուշտ և արիւնկզակ, քան բուն քիւրդերը և որոնք բնակվում են Անաւարզավի և Մսիսի մէջտեղ, համարվում են սերված հայերից կամ քրդացած հայեր, քանի որ պահպանել են շատ հայկական սովորութիւններ և հայլական դէմքը արտայատութիւն, ինչպէս և հայուկ անունը:

Հայոց ծագումից է համարվում նոյնպէս և պօզան ցեղը, որ բնակվում է Ամանոսի կամ Սև սարերում և միայն ձմեռն է իջնում Մսիսի և Անաւարզի գաշտերը, հօտերը արածացնելու համար:

Թիւրքմէնները և աֆշարները, երկու ազգակից ցեղեր, որոնք հաստատվել են Կիլիկիայում XI-րդ դարում, մէջուկեան արշաւանքից ի վեր, Կիլիկիավի ազգաբնակութեան զիխաւոր մասն են կազմում իրանց թւոլ և բաժանվում են երկու զիխաւոր ճիւղերի — իւրիւք (լեռնաբնակ) և Չուզուք (գաշտաբնակ) թիւրքմէնների, որոնք բաժանվում են զանազան մանր տոհմերի կամ էշիրալժների: Այդ տոհմերի մէջ նըշանաւորներն են՝ Սինանլը, Գիւրճի, Խօզան-

օղլու, Սանդալլը, Սարխանդ-օղլու, Բամազան և այլն:

Այս բոլոր ցեղերը — քիւրդ, թիւրքմէն, աֆշար, հայուկ, պօզան, և այլն, թափառական վրանաբնակ են, տաւարածներ և խաշնարածներ:

Թիւրքերը կամ օսմանլիները, որոնք թւի կողմից աննշան են, բայց իբրև իշխող տարր՝ տիրապետող են հանդիսանում, հաստատվել են երկրում 16-րդ դարում, երբ օսմաննեան սուլթանները նուաճեցին Կիլիկիան:

Զէրքէղները գազթել են Կովկասեան լեռներից միայն 1864 թւին, մօտ 1000 տուն են և սկզբում թէւ ասպատակութեամբ էին ապրում, բայց այժմ ընտելացել են և երկրագործութեան:

Անսարի արաբները մշտաբնակ չեն, այլ ամառը հունձի ժամանակ գալիս են Ասօրիքից:

Նասրանի կոչված ասօրի աղանդաւորները ընակվում են գաշտավին մասի գիւղերում և լաւ երկրագործներ են: Նրանց կրօնքի մէջ արտաքուստ մահմեդականութիւն կայ, իսկ ներքուստ անյայու է և նման է եղիղների կրօնին:

Ղղիբաշները սակաւաթիւ են և նոյնպէս համարվում են եղիղների նման աղանդաւորներ:

Գիւղերում այս բոլոր ցեղերը մեծ մասամբ
ապրում են զատ զատ, իսկ քաղաքների բնա-
կիչները բոլոր ազգերի խառնուրդ են կազմում
ինչպէս Ազանա, Տարսոն, Սիս և այլն:

Դեմ շաբաթ պահաժաման նախ պարզուին
աշխատ բայց այս վայր ունի առաջնակ քայլա-
նակ պահաժաման անունուրդու մեջ բանականի
շաբաթանակ պահաժաման անունուրդու:

Անտիրիթ վեճաւում պահաժա-
ման սանապետը ունի քայլայր պահաժաման
մեջ 0001 առաջ անգամ 1001 պարզ քայլա-
յրում ովհե պահաժաման անունուրդու և
պահաժաման անունուրդու ներս բայց այսու

բայց ամե թափառուն պահաժաման պահաժա-
ման պահաժաման անունուրդու ունի առաջ պահա-
ժաման պահաժաման պահաժաման պահաժա-
ման պահաժաման պահաժաման պահաժա-
ման պահաժաման պահաժաման պահաժա-
ման պահաժաման պահաժաման պահաժա-

ման պահաժաման պահաժաման պահաժա-
ման պահաժաման պահաժաման պահաժա-

V

Կիւկիալի ազգաքնակութեան թիւր: Հայերի թիւր: Գիւա-
ւոր քաղաքները և աւանները: Հայերի կրօնական և
կրթական վիճակը:

Թիւրքիալի մէջ օր ի նաւոր վիճակազրու-
թիւն չը կայ, ոստի շատ գժուար է որոշել Կի-
ւկիալի բնակիչների բուն թիւր: Օր ի նաւոր
ենք ասում այն պատճառով, որ թէւ կայ պաշ-
տօնական վիճակազրութիւն ամեն մի վիլայէթի
համար, բայց կառավարութիւնը զիտմամբ կեղ-
ծում է այդ վիճակազրութիւնը, շատացնելով
կամ պակասեցնելով որոշ ազգութեան թիւր՝ իր
զանազան քաղաքական նկատումների և նպա-
տակների համար:

Եւրօպացի ճանապարհորդները ամբողջ Կի-
ւկիալի բնակիչների թիւի մասին տարբեր կար-
ծիքներ են յայտնում: Լանգլուան համա-
րում է այդ թիւ. ը 150,000. նոյնը կարծում է
և Պանգուօ, բայց Պարքը համարում է
300,000:

Գալով հայերի թիւն, Ալիշանը համարում

է 15,000 երդ (ծուխ). նոյն կարծիքը յայտնում է և ֆերենցը, ասելով թէ Կիլիկիայի 150,000 բնակչութեան կէտը (75,000) հայ է, և եթէ ամեն մի ծուխ հաշուենք բաղկացած 5 հոգուց, ուրեմն Ալիշանի 15,000 երդը պէտք է նոյնպէս համարել 75,000:

Վիկոր Լանգլուան Սսի կաթուղիկոսի իրաւասութեան տակ գտնվող հայերի թւի մասին աւելի ընդարձակ տեղեկութիւններ է տալիս: Ահա նրա վիճակաղրական ցուցակը, որ նա կազմել է 1850 թւին:

1) Ատանա

Սիս	.	200	տուն
Ատանա	.	800	"
Տարսօն	.	100	"
Կեփորտաղը (գաւառ)	.	50	"

2) Մարաշ

Փուռնուղ	.	600	"
Հաճին	.	5,000	"
Մարաշ	.	700	"
Զէյթուն (գաւառ)	.	3,000	"

3) Հալէպ

Անթար	.	1,300	"
Հալէպ	.	200	"
Անտիօք	.	900	"
Քիլիս	.	150	"
Կիպրոս	.	400	"

Գումարը . 13,400 տուն

Ցուց տալու համար, թէ մինչեւ ո՞ր աստիճան աշխարհագիրները և ճանապարհորդները անհամաձայն են միմեանց հետ նոյն խև քաղաքների բնակիչների թւի վերաբերմամբ, բաւական է ասել, որ, օրինակ, Ելիզի Ռէկլիւ, իր աշխարհագրութեան մէջ, Սլովի բնակիչների թիւը համարում է 5,000 հոգի (հայ և ուղիցները): Լանգլուա համարում է 200 տուն: Հաճինինի բնակիչների թիւը Ռէկլիւ հաշում է 10,000, Ֆերենց հաշում է՝ 35,000: Զէլթունի բնակիչների թիւը Ռէկլիւ լայտնում է՝ 10,000 հոգի, Ֆերենց՝ 18,000, Լանգլուա՝ 3,000 տուն, իսկ մի այլ աղբիւր 10,000 հաշում է միայն Փուրնուղի 14 գիւղերի բնակիչների թիւը:

Դիմենք այժմ թիւրքաց կառավարութեան վերջին, այն է 1892 թւի պաշտօնական վիճակաղրութեան կամ սալնամէին:

Ատանայի վիլայէթ

Մուսուլման	.	225,000	կամ	56%
Հայ	.	97,000	"	24%
Ուրիշ քրիստոնեաներ	.	75,500	"	19%
Գումարը մօտ'		400,000		

Հալէպի վիլայէթ

Մուսուլման	.	790,000	կամ	79%
Հայ	.	49,000	"	5%
Ուրիշ քրիստոնեաներ	.	136,000	"	13%
Գումարը		995,000		

Ուրեմն, թիւրքաց վիճակագրութեան համաձայն Հայերի թիւր Կիլիկիայում 146,000 է կամ մօտաւորապէս 150,000: Այս թիւր կազմում է կրկնապատիկը, ինչ որ ցոյց են տուել Լանգլուան, Ֆերենցը, Ալիշանը և ուրիշ ճանապարհորդներ, և յամենայն դէպո չի կարելի համարել չափազանցրած, այլ ընդհակառակն, պէտք է ընդունել եթէ ոչ պակասեցրած, զէթիքը տունիստ, ի նկատի ունենալով, որ թիւրքաց կառավարութիւնը, բէրլինի կօնդրէսից յետոյ, շարունակ աշխատել է Հայերի թիւր պակաս, իսկ մոռաւութմանների թիւր աւել ցոյց տալ: Զը մոռանանք և այն, որ 146,000 թիւր վերաբերում է միայն լուսաւորչական Հայերին, մինչ Կիլիկիայում կալ և մի մեծ բազմութիւն կաթօլիկ և բողոքական Հայերի, որոնց թիւրքաց կառավարութիւնը բաժանում է Հայերից և դասում այլադաւան քրիստոնեաների շարքը: Ել չենք խօսում հայուկ և պօդան «Հայասերմ» քիւրդերի մասին, որոնք մտցրված են մոռաւութմանների թիւի մէջ:

Այդ բոլոր հանգամանքները ի նկատի ունենալով, համարելով Կիլիկիան ամփոփված Ատանայի ամբողջ վիլայէթի և Հալէպի վիլայէթի մի մասի մէջ, մենք համարձակ կարող ենք Կիլիկիայի ընդհանուր բնակիչների թիւր ընդու-

նել 500,000, իսկ Հայերի թիւր՝ 150—200,000: Գալով Զէյթունի, այսինքն այդ անունով կոչված գաւառով կամ «նախկին դաշնակցութեան» Հայերի թիւն, պէտք է ընդունենք, որ այդ թիւր 30—35,000 է, քանի որ Զէյթունի դաշնակցութեան մասն կազմող և 0հանուս. Կարապետ վանքի վանահօր իրաւասութեան տակ գտնված միայն 14 գիւղերի—Փրնուզ, Պարոննենք, Պուղերենք, Խուզուզենք, Կէնչի, Պունտուչի, Կապան (Հոչակաւոր Կապան բերդը), Կոկսօն, Տէկիրմէնդէրէ, Տաշօլուք, Քիրէճ, Կէօլփունար, Ջիվիլի և Խենլմեգալէ—բնակիչների թիւր հաշտում են մօտաւորապէս 10,000, ինչպէս ցոյց է տալիս մի նկարագրող *), քանի որ Սւ կամ Ամանոս լեռների մէջ ևս ցիր ու ցան փոքրիկ հայ գիւղեր կան, որոնց մէջ մօտ 1,000 տուն բնակիչ են հաշտում:

Ամբողջ Կիլիկիայի մէջ մի քաղաք չը կայ, որ 50,000 բնակիչ ունենալ: Յունական և Հայկական տիրապետութեան ժամանակի հոչակաւոր և փառաւոր քաղաքները—Տարսօն, Սիս, Այսու, Միսլու, Անաւարգա, Ալէքսանդրէտ, մա-

*) „Արաքս“ 1889 թ.

նառանդ Սիս, Ռուբեննեանց վառագարդ մայրա-
քաղաքը և անմատչելի համարված բերդը այժմ
միայն ողորմելի կիւղեր կամ զիւղաքաղաքներ
են ներկայացնում, մեծ մասամբ աւերակ և մի
քանի հարիւր տասն բնակիչներով:

«Սիսում դեռ տեսնալում են, — ասում է Խլի՛-
դէ Բէկիւ, դար բասի կամ թագաւորի պալա-
տի մնացորդները: Պատարելով թագաւորական
մայրաքաղաք լինելուց, Սիսը մնացել է իրքե-
կրօնական աթոռանիստ քաղաք, արտեղ գտնու-
վում է մի պատրիարք, որին թիւրքաց կառա-
վարութիւնը աշխատել է իջմիածնի սլատրի-
արքի հակառակորդը շինել: Դէպի Զէյնուն գէ-
տը իջնող ճանապարհում, մի բրիւ վրա տեսնը-
վում է Անապարբի ամուր բերդը, մասուլման-
ների չալին-զարբան, որ Սիսից առաջ հայոց
թագաւորների մայրաքաղաքն էր և որը հռչա-
կաւոր է իր հռօմէական աւերակներով, մանա-
ւանդ երկու հին ջրանցքներով, որոնց առատ
ջրերը շրջապատող անապատը մի անհուն պար-
տէզ էին դարձրել, ալնքան գեղեցիկ, որ 12-րդ
դարում Եղբային կարողացաւ համեմատել Անա-
ւարդակի դաշտը Դամասկոսի «գրախտի» հետ»:

Կիլիկիաի այժմեան զիւնաւոր և փոքր ի
շատէ նշանաւոր քաղաքներն են. — 1) Ատանա,
որ վիլայէթի զիւնաւոր քաղաքն է և ունի

45,000 բնակիչ, 2) Մարաշ, որ վալիի ամա-
րանոցն է և ունի 24,000 բնակիչ, որի կէսը
հայ, 3) Տարսոս, որ ունի 12,000 բնակիչ,
4) Հաճին — 10,000 բնակիչ, զրեթէ բոլորը
հայ, 5) Մէրսին, որը իբրև նաւահանգիստ,
միակ յարմար հաղորդակցութեան կէտն է Եւ-
րոպայի հետ և ունի 6,000 բնակիչ, 6) Սիս
— 5,000 բնակիչ 7) Ալբատան — 3,000 բնա-
կիչ, և այլն:

Այս վիճակագրական թւերը բերված են Խ-
լիդէ Բէկլիսի աշխարհագրութեան մէջ, որ հրա-
տարակված է 1884 թիւն, սակայն Ալիշան և
իսունական թուականների եւրոպացի ճանապար-
հորդները, ինչպէս և նորագոյն ժամանակի հայ
ուղևորները բոլորովին տարբեր և միմեանց հա-
կանական թուանշաններ են հաղորդում: Այսպէս,
օրինակ, Ալիշան ասում է. «Օսմանեան վերջին
վիճակագրութեան համաձայն, չաճին քաղաքի
և շրջա պատի բնակիչների թիւը 12,000 հայ
է և 200 մահմետական, ամբողջ քաղաքի և
չաճինի վիճակի հայերը — 13,000, մահմետա-
կանները և նորեկ չերքէ զները — 5682: Մերա-
յիններից մէկը 1840 թիւն չաճինի հայերի
տների թիւը հաշւում էր 2,000, մի ուրիշը
1854-ին, — 2,500, իսկ Պալտիզագանեանը
1863-ին՝ 3,000: Դէսիէ ֆրանսիացին, որ

1836-ին Հաճին մտաւ, նոյնպէս 3,000 հայ, և 34 ազագգի տուն է ասում, իսկ Զիլաշէվը, 1849 թվին հայերի տները 2,000, և ազագգիները—190 է գրում. չորս տարուց յետոյ (1853 թվին), միայն 1,500 տուն հայ և 30 տուն մուսուլման է ցոյց տալիս»:

Ատանավի մասին մենք տեսանք, որ Բէկլիւ հաշւում է 45,000 բնակիչ, իսկ Ալիշան և ուրիշները ցոյց են տալիս 60,000. Հայերի թիւը 1875 թվին ֆրանսիացի Դէվիս որոշում է 1,700 տուն, բայց կաթոլիկ և բողոքական հայերից, մինչ Ֆերենց, որ անձամբ ճանապարհորդել է Կիլիկիա, միայն 1,000 տան չափ է հաշւում:

Մի ուրիշ աղբխր Մարաշի մէջ 10,000 տուն բնակիչ է հաշւում, որից 3,000 տունը հայ:

Հայր Ալիշան առաջ է բերում մի վիճակագրութիւն 1878—80 թ., կատարված, որի համաձայն կապան գաւառի, այն է Զէյթունի և նրա շրջակայ գիւղերի, Փոնուզի, Ալբատանի, մի խօսքով Զէյթունի թեմը համարվող վիճակի հայ բնակիչների թիւը համարվում է 27,460, իսկ խոհանուններինը—8,344:

Այս բոլոր տարբեր թուանշանները և հակասութիւնները կարելի է բացատրել միայն եր-

կու իրողութիւններով. 1) կամ ուսումնասիրողները կատարել են իրանց ուսումնասիրութիւնը հարևանցի և անուշաղիք կերպով, կամ 2) Կիլիկիան, Թիւրքիայի միւս նահանգների պէս, շարունակ ենթարկվելով աւերտումների, հարստակարութիւնների և դրանց հետևանք գաղթականութիւնների, տեղափոխութիւնների, քաղաքների և գիւղերի աղբաբնակութիւնը զրեթէ ամեն 10 տարին մի անգամ մի տեղ զգալի կերպով նուազում է, միւս տեղում աճում, քանի որ հարստակարվողները մի տեղից միւս տեղ են ապաստանում:

Մի քանի խօսք էլ Կիլիկիայի հայերի կրօնական և կրթական վիճակի մասին:

Յալտնի է, որ Կիլիկիան կրօնական և եկեղեցական տեսակէտով նոյնպէս մեծ գեր է խաղացել Հայոց ազգի պատմութեան մէջ: Ամբողջ 150 տարի (1293—1441 թ.) Հայոց ընդհանրական կաթողիկոսի աթոռը գտնվում էր Կիլիկիայում, ունենալով իբրև աթոռանիստ՝ չոօմկալայ բերդը, Գրագարկ վանքը, Սիսր: Կիլիկիան տուել է այնպիսի հռչակաւոր հոգևորականներ, ինչպէս Ներսէս Ճնորհալին, Ներսէս

Համբառնացին, որոնք ոչ միայն եկեղեցական, այլ և ազգային մեծ զործիչներ էին և տաղանդառնորդներ:

1440 թւից սկսած Սսի աթոռը դադարեց ընդհանրական լինելուց, երբ Գրիգոր Մուսաբեկնց կաթողիկոսը յանձն չառաւ տեղափոխվել իշմիածին, և շարունակեց իր գոյութիւնը իբրև կաթողիկոսութիւն «տանն Կիլիկիոյ»: 18-րդ դարում (1734 թ.), կաթողիկոսական գահը անցաւ «Աջապահեան» կոչված ցեղի ձեռքը, որի վերջին ներկայացնեցիչն եղաւ Կիրակոս Գ., որ 43-րդ կաթողիկոսն էր Մուսաբէկէնցից սկսած, և որը հրաժարուեց գահից 1866 թւին:

1871 թւին առաջին անգամ Կիլիկիան ունեցաւ սահմանադրական կաթողիկոս, երբ Խրիմեանի պատրիարքութեան օրով, ազգային ժողովի ձեռքով Սսի կաթողիկոս ընտրվեց մարացի Քէֆսիզեան Մկրտիչը, որի 25-ամեայ կաթողիկոսութիւնը բոլորովին ապարդիւն անցաւ Կիլիկիայի համար և Սսի աթոռը բոլորովին քայլացման վիճակի ենթարկվեց: Գէորգ Դ. կաթողիկոսը այդ աթոռը հրատարակել էր «Հետաքաջական հերձուածող», բայց Մակար կաթողիկոսը վերցրեց այդ բանադրանքը:

Ինչպէս յայտնի է, Մկրտչի մահից յետով ազգային ժողովը այս տարի կաթողիկոս ընտրեց

Ալէաթձեան Գրիգորիս եպիսկոպոսին, որի ընտրութիւնը, սակայն, թիւրքաց կառավարութիւնը յանդուդն ամմառութեամբ մինչև այսօր զբանում է վաւերացնել և աթոռը մնում է թափուր:

Ներկայումս Սսի կաթողիկոսարանը բոլորովին ամայի է, ամայի են և քարուքանդ Կիլիկիայի, մանաւանդ Աւ լեռան հաջակաւոր վանքերը, որոնք մի ժամանակ մի մի զրական օջախներ էին; Ամբողջ թեմում մի հատ օրինաւոր եպիսկոպոս, վարդապետ, քահանակ, քարողիչ չել կայ. ըլ կայ նոյն իսկ մի հատ հոգեորդացը; Միակ ժողովը պահպահեանութիւն վայելող Փուլնուղի Նիկործո եպիսկոպոսն ես, իր կատարած վերջին խայտառակ դերի պատճառով, երբ թիւրքաց կառավարութեան ձեռքում զործիք դարձաւ. Ալէաթձեանի ընտրութիւնը ոչնչացնելու համար, կորցրել է իր նշանակութիւնը և հեղինակութիւնը:

Վերջին քսան տարվայ ընթացքում բաղմաթիւ կաթողիկ և բողոքական քարողիչներ են հաստատվել Կիլիկիայում:

Ոչ պակաս ցաւալի վիճակի մէջ է և կրթական գործը: Մի ժամանակ Կ. Պոլսի Միացեալ ընկերութիւնը սկսել էր աշխատել դպրոցներ բանակ Կիլիկիայում. այդտեղ, զլիսաւորապէս

Մարաշում, կազմվել էին զանագան ընկերութիւններ, ինչպէս Կիլիկեան, Ռուբինեան, Մամիկոնեան, Ընթերցասիրաց, Հայուհեաց, որոնք մի քանի դպրոցներ և ընթերցարաններ բացին, բաց ոչ մի քաջալերութիւն չը գտնելով կաթողիկոսի կողմից, դադարեցին դորձելուց և այսօր ամբողջ Կլլիկիայում մի փոքր ի շատէ կազմակերպված և կրթական ու մանկավարժական պայմաններին համապատասխանող դպրոց չը կայ: Եղածներն անբարեկարգ, անապահով փոքրիկ դպրոցներ են, զուրկ թէ նիւթական և թէ ուսումնական միջոցներից:

Այս ասածները վերաբերում են ազգային դպրոցներին. սակայն պէտք է առենք, որ կաթոլիկ և բողոքական միսիաները վերջերս հաստատել են Կիլիկիայում բաղմաթիւ դպրոցներ և կոլեճներ, ինչպէս Տարսոսում, Մարաշում, Այնթաբում, Ատանայում, Հաճինում, ըստ մեծի մասին կրօնական, կամ ինչպէս իրանք են կոչում «Աստուածաբանական» կոլեճներ:

VI.

Զէյթունի ծագումը և պատմութիւնը: Դաշնակցական խորհուրդը:

Մեր յօդուածի այս զլուխը նուիրում ենք Կիլիկիայի այն մասին նկարագրութեան, որը յայսոնի է Զէյթուն կամ Ուլնի ա անունով, և որը այժմ ընդհանուր հետաքրքրութեան առարկայ է:

Խմապէս Զէյթունը, իբրև երկիր, առաջին անդամ պատմութեան մէջ լիշվում է 15-րդ դարից սկսած, այն ևս Ուլնիա անունով, խոկ Զէյթուն անունը առաջին անգամ լիշվում է լիշտակագրերի և ձեռագիրների մէջ միայն 16-րդ դարի վերջերում: Նրա պատմական անցեալի մատին որոշ և սոոյզ տեղեկութիւններ չունենք, որովհետև հին պատմութեան մէջ Կիլիկիայի լեռնոտ երկրի մասին, եթէ խօսք է լինում, լիշվում է «Կոկիսօնի լեռներ» անունով:

Ընդհանրապէս կարծում են, որ «Զէյթուն» բառը առաջ է եկել նրանից, որ Կիլիկիայի այդ մասում շատ ձիթենիներ կան և երկիրն ևս

կոչվել է «Զէլթուն», որ թիւրքերէն է: Բայց այդ կարող էր տեղի ունենալ թիւրքերի տիրապետութիւնից լետոյ: Հայր Ալիշան հաւանական չէ համարում այդ բացատրութիւնը, որովհետեւ, նկատում է նա, ձեռագիրների մէջ ասված է. «Զէլթուն» և ոչ «Զէլթուն»: Գալով երկրին, նա կարծում է, որ իսկապէս Զէլթունը, իրեւ մի ինքնուրոյն երկրը, կամ դաշնակցութեան մարմին, սկսվել է կազմակերպվել Թուրքիան կամ Սիսուանեան թագաւորութեան անկումից յետոյ, երբ մի քանի բերդատէրեր շարունակեցին իրանց իշխանութիւնը լեռնալին ամուր տեղերում: Այդ առիթով Ալիշան առաջ է բերում 1473 թիւն զրված մի լիշտատակաղիր, որի մէջ ասված է, թէ հայոց մեծ սպարապետ չեթումի կին Զարմանուհին, չեթումի սպանութիւնից լետոյ «փախաւ Կոկիսօնի և Ռւնիխալի սարերը, և այնտեղ թափառում էր հինգ տարի. հինգ տարոց յետոյ հաւաքելով լեռնականներից 300 հազիրի, իր որդի Ֆէորզի հետ առաւ Կապան բերդը և ազատ պահեց աղջը ալլազգիների ձեռքից ամբողջ 65 տարի»:

Արդեօք այդ լիշտատակարանը առաջ բերելով Ալիշան կամենում է մի կապ դանել Զէլթուն և Զարմանուհի բառերի մէջ և նրան

համարել Զէլթունի անկախութեան հիմնադիրը, դժուար է հասկանալ, որովհետեւ նա խուլ կերպով է խօսում այդ մասին:

Վիկտօր Լանգլուա, որը բաւական ուսումնասիրել է Կիլիկիայի պատմութիւնը, ահա ինչ է ասում Զէլթունի ծագման մասին. «Եզիպտացիները (Մամըլիւքները) թէպէտ շատ անգամ արշաւել էին Կիլիկիայի վրա, բայց չէին կարծացել հաստատել այնտեղ իրանց իշխանութիւնը. վերջապէս, XIV-րդ դարի վերջում նուաճեցին այդ երկրը և չայստանի լուսինեանների գահը կրծանեցին: Յաղթականների թրից աղատված հայերը, ինչպէս և Սիս մայրաքաղաքի առման ժամանակ լուսինեան և ևան Զ. թագաւորից հեռացած առպետները և դօքականները փախան և ապաստանեցին Տօրոս լեռան կիրճների մէջ այլուղ մի նոր հայքենիք հաստատելու և իրանց աղատութիւնը, կրօնը ու սովորութիւնները պահպանելու մտքով: Թէպէտ չորս կողմից եղիպտացիների, թիւրքմէնների և քիւրգերի պէս անհաշտ թշնամիներ ունէին, բայց Տաւրոսեան շղթայի բարձրաբերձ սարերի մէջ ապաստանած և պահպանելով նրա կիրճները, հայերը առանձին համայնքներ կազմեցին, որոնք աճում էին նոր գաղթականներով, և քաջասիրտ գօրավարների հրամանար-

տարութեամբ, կարողացան շատ հեռոսական կոխոներից յետոյ յարատեել իրանց ամրութիւնների մէջ և ազատվել ստրկութիւնից, կամ, աւելի լաւն ասենք, բնաջինջ լինելուց:

«Ճշապատված լինելով թշնամիներից, որոնք շարունակ փորձում էին նրանց պաշտպանող ժայռերի գոտիներից վեր բարձրանալ, հայերը ստիպվեցին պատճէշներ կանգնեցնել և արգելքները շատացնել, որպէս զի թշնամիները չը կարողանան ոչ իրանց ամրութիւններին մօտենալ և ոչ ևս կողոպտել Եփրիւք ասված վրանաբնակ հայերի բանակները, որոնք նրանց համար առաջապահ գնդերի տեղ էին ծառայում և պատսպարում էին նրանց ամեն մի յանկարծական յարձակմունքից: Երբ, բաւական ժամանակից յետոյ, այդ բոլորովին պատերազմական հայ զաղթականութիւնը իրան բաւական ապահով զգաց զօրաւոր յարձակումների դէմ, սկսեց պարապել երկրագործութեամբ:

«Երկրի այն կտորը, որտեղ հայերը խփել էին իրանց վրանները, արտակարգ պտղաբերութիւն ունենալով, առատաբար արտադրում էր նրանց ապրուստի կարիքը: Զիթենիների այն բազմաթիւ պլանտացիաները, որ ջենովացիները մի ժամանակ մշակել էին, այնքան նշանաւոր բերքերի աղբեւու ներկայացան, որ հայերը իրանց

բնակած երկրի անունը «Զէլթուն» դրին, որ թիւրքերէն նշանակում է ձիթենի: Սոի, Ատանալի, Տարսոնի և Մսիսի հայերը, լսելով Զէլթունցիների աջողութիւնը, փախան ու եկան միացան իրանց հալքենակիցների հետ և նոր համայնքներ կազմեցին:

«Եւ մինչդեռ Զէլթունի ցեղերը այդպէս կազմակերպվում էին, մի նոր հայկական գաղթականութիւն, դուրս գալով Կիլիկիայի տափարակներից (Չուխուր-Օվայ կոչված), եկաւ նոյնպէս հաստատվեց Տաւրոսի սարում, Սոի հիւսիսալին կողմում, մի օրվայ ճանապարհով նրանից հեռու: Այդ դիրքը ունենալով, հեշտ էր զանազան հայ համայնքների համար հարկաւոր եղած ժամանակ միմեանց օգնել. այդտեղ նրանք մի գիւղ շինեցին չաճին անունով, որ այժմ Խօզան-օղլու տիրապետած երկրի կենտրօնն է կազմում: Վերջապէս, Ամանոս լեռը (Սև սարը), որ բաժանում է Կարամանիան Սիրիալից, Կիլիկիայի արևելեան ամեն կողմերից եկած ուրիշ հայերի ապաստարանը գալձաւ: Նրանց հետեւեցին ուրիշ գաղթականներ, որոնք գալիս էին այդ ընդարձակ երկրի ամեն կողմերից և որոնց թիւը շատով այնքան շատացաւ, որ Ամանոս լեռան ամբողջ շարքը բռնեցին նրանք և ամբացըին այդ սարը Տաւրոսի ու Զէլթունի կիր-

Ճերի պէս: Այդ է պատճառը, որ թիւրքերը
Ամանսի սարերում ապաստանած հայերի այդ
դիրքին «Գեավուր-դաղ» անունը տուին (ան-
հաւատների սար):

«Եւ ահա ալզպէս, Տաւրալ սարերում հաս-
տառից մի յատուկ հայ գաղթականոթիւն, որ
մինչեւ այժմ որոշվում է իր դրացի թիւրքէն
և քիւրդ ցեղերից իր նահապետական բարք ու
վարքով և պատերազմական քաջութեամբ»:

Վերևում արացինք, որ ամենահին գրաւոր
լիշտակարանը, որի մէջ լիշտաձ ենք տեսնամ
Զէյթուն բառը, վերաբերում է 16-րդ դարի
վերջին: Այդ լիշտակարանը Դրիգոր ՓՖ. պա-
պին ուղղած մի վկայագիր է, զրված 1586
թիւն Սզարիայ վարդապետի Սսի կաթողիկոս
ընտրվելու համար: Մի ուրիշ ձեռազրի մէջ, որ
զրված է 1596 թիւն, այսպէս է ասված. «Գրե-
ցաւ զիրքս» ի գէ թունոյ վանքն ի սուրբ
Աստուածածնի դուռն»: Թրանից յետոյ արդէն
յաճախ կրկնված ենք տեսնում Զէյթուն անու-
նը, սակայն իբրև քաղաքագիւղ և ոչ իբրև
երկիր կամ գաւառ. այդ գէպքերում Ուլիսա ա-
նունն է զործածվում:

Յայտնի աշխարհագիր Ելիզէ Ռէկիւ ահա
ինչ է ասում Զէյթունի մասին. «Զէյթունի վե-
րևի աւագանի վրա գտնված գլխաւոր քաղաքը

Ալբինտաններէ, որին մէջ մի քանի հայ ընտա-
նիքներ կան, աբաց նրան հարաւ-արևմուտքում
վեց փոքր համանգներից բաղկացած մի հայ-
կական գաշնակցութիւն (confédération հայ-
կան) կայ, որը պահպանվել է մինչեւ մերջին
օրերս Զէյթուն կամ «Զիթենի» կոչված բարձր
հովիտներում, թէւ ծառերը ամենեւին չեն բու-
նում 1,500 մէտրից պակաս բարձր լեռնոտ տե-
ղերում: Այդամի եղակի երեսոյին է հայկական
աշխարհում, որը գրեթէ ամբողջավին բաղկացած
է առկացած հպատակներից, տեսնել ազատ
լեռնականների մի հասարակութիւն, որը պահ-
պանել է իր անկախութիւնը դարերի ընթաց-
քում: Թուղի մօտ 10,000 և կատարելապէս
վարժված զէնքի գործածութեան մէջ, այդ հայ-
կեանները (Հայկանes) պատուարել են իրանց
երկիրը կիրճներում շինափած մի քանի ամբութիւն-
ներափ և առաջ թողլ չէին տալիս ոչ մի մահ-
մետականի մտնել իրանց երկիրը. նրանք Ալբին-
տանի վաշարին ուրիշ հարկ չէին վճարում,
բացի գաշտակին մասերում իրանց մշակած հո-
գերի վարձը»:

Այս բոլոր տեղեկութիւնների հիման վրա,
մենք կարող ենք մի ընդհանուր եղակացու-
թիւն անել Զէյթունի ծագման և նրա պատ-
մութեան մասին: Այսդէ, ինչպէս նկատում է

Հանգլուան, այդ երկրի հայերի պատմութիւնը այնքան մուժ կէտեր է պարունակում, որ անկարելի է նրա զանազան շրջանները ներկայացնել ամենայն ճշդութեամբ, բայց յամենայն դէպս, այս կարող ենք հասաստել, որ Լուսինեան թագաւորութեան կործանումից յետոյ Կիլիկիայի հայ ժողովրդի մի մասը՝ ապաստանելով Տաւրոսի և Ամանոս կամ Սև սարերի անառիկ բարձրութիւնների վրա, հաստատեց այդտեղ հանրապետութեան նման մի կառավարութիւն և պահպանեց իր անկախութիւնը, շարունակ կռիւ մղելով դաշտավին թիւրքմէնների, թիւրքերի և քիւրդերի դէմ և միայն երբեմն վճարելով հարկ օսմաննեան կարավարութեան կամ թիւրքմէն զօրաւոր ցեղերից մէկին:

Ներկայ դարի սկզբում աչա թէ ինչ դրութեան մէջ էր այդ երկիրը: Տաւրոսի և Ամանոսի լեռներում բազմաթիւ հայ և մի քանի թիւրքմէն համայնքներից բաղկացած մի դաշնակցութիւն, որ կոչվում է Ռունիա և որի նըշանաւոր անդամները կազմում են Զէլթուն գիւղաքաղաքը, չաճին քաղաքը, Ֆրնուզ և բագմաթիւ արիշ գիւղեր ու աւաններ: Այդ դաշնակցութիւնը կազմող լեռնականների թիւը հասնում է 30—35,000-ի: Դաշնակցութեան կառավարութիւնը ժողովրդի կողմից, ամենահին

ժամանակներից, յանձնված է բուն Զէլթուն քաղաքի մէջ նստող չորս իշխաններին, որոնք ժառանգաբար վարում են իշխանութիւնը և միւս տեղերում՝ նշանաւոր անձերի միջից ընտրված քեահան բին: Զէլթուն քաղաքին վերաբերեալ գործերը վարում են իշխանները, իսկ գաշնակցութեան վերաբերեալ գործերը՝ գաշնակցական խորհուրդը, որ կազմվում է իշխաններից և քեահաններից: Այդ խորհրդի նախագահը Զէլթունի կամ Ռունիայի թեմի առաջնորդն է, որ նստում է ո, Աստուածածնի վանքում: Խորհրդի պաշտօնն է՝ դատավոր լինել, դաշնակցութեան մէջ ծագած երկպառակութիւններին մերջ տալ, հաւաքել գլխահարկը, որի մի մասը գործ են ածում եկեղեցիների, վանքերի շինութեան և դաշնակցութեան պէտքերի վրա, իսկ մի մասով վճարում են պետական հարկը Մարաշում նստած փաշալին: Օսմաննեան պետութեան տրփող այդ հարկը, սակայն, կամաւոր է, նրա քանակութիւնը 60,000 դրուշ է, որը սակայն վճարվում էր, երբ կամենում էին կամ հարկաւոր էին համարում: Գլխահարկից մի մաս էլ վճարում էին Սահ կաթողիկոսին և Զէլթունի առաջնորդին:

Դաշնակցական խորհրդը բոլոր հարցերը վճռում էր ձայների առաւելութեամբ, հաւա-

սարութեան դէպըում նախագահի ձայնը վճռում
էր խնդիրը: Զորս Եշխաններից ամեն մէկին
յանձնված էր Զէլթուն քաղաքի 4 թաղերից
մէկը, որտեղ նա համարվում էր զլխաւոր դա-
տարոր, իսկ գիւղերի դատաւորները քեահաներն
էին, և որովհետև ամեն գիւղի քեահան ընտր-
վում էր նրա նշանաւոր բնակիչների միջից,
ուստի հայաբնակ գիւղերի քեահաները հայ էին
լինում, իսկ իսլամաբնակ գիւղերինը — իսլամ:
Այդ պատճառով էլ դաշնակցութեան նախագահ
Զէլթունի արքեպիսկոպոսը չէր խաւնվում դաշ-
նակցութեան ներքին քաղաքացիական գործե-
րի մէջ:

Ամեն անգամ, երբ դաշնակցութեանը մի
որ և է վտանգ էր սպառնում, դաշտաբնակ
եւրուք թիւրքմէնների, քիւղերի կամ թիւր-
քերի կողմից, դաշնակցութեան Եշխանները և
քեահաները հաւաքում էին իրանց ձեռքի տակ
եղած և գէնք կրելու ընդունակ բնակիչներին:
Այսպիսով կաղմվում էր 7—8000 հոգուց բաղ-
կացած մի զօրք: Գաշնակցութեան անգամ
հայերը և թիւրքմէնները մի և նոյն դրօշակին
էին հետեւում և հաւասար եռանդով կուտում
էին իրանց ազատ երկրի պաշտպանութեան հա-
մար:

Ահա այդպէս էր դաշնակցութեան կաղմա-

կերպութիւնը դարիս սկզբին: Բնական է, որ
այդպիսի կազմակերպութեամբ, մանաւանդ եր-
կրի զիրքի շնորհիւ, Զէլթունցիները յաճախ
պարզում էին ապստամբութեան դրօշակը օս-
մանեան կառավարութեան դէմ, մանաւանդ որ
կառավարութիւնը de facto չէր կարողացել
նուաճել այդ երկիրը և զսպել. նոյն իսկ դաշ-
տային թիւրքմէն ցեղերը զանում էին վճարել
որոշեալ 60,000 դրուշ հարկը:

Այդ փոքրիկ հայ դաշնակցական կաղմու-
թիւնը տևեց մինչև 1864 թիւը: Ակսած XVI-րդ
դարից, ինչպէս տեսանք, նա մի ամբողջ շարք
կուիւներ մզեց և 1800 թուից սկսած, այն է
ներկայ դարի սկզբից, նա ստիպված է եղել
քառասունից աւելի կուիւներ մզել մուսուլ-
ման թափառական ցեղերի և թիւրքական զօր-
քերի դէմ և մի քանի անգամ ապստամբվել:

Ներկայ 19-րդ դարում տեղի են ունեցել
այդ տեսակ ապստամբութիւններ 4 անգամ —
1819 թիւն, 1861—62 թիւն, 1872-ին և
այժմեանը, որ դեռ այս բօակիս էլ շարունակ-
վում է:

թեսակ այս նկարագիրը հիմնված չէ անձնական ուսումնասիրութեան վրա, այլ մի քաղուածք է այն մի քանի հազուազիւտ գրուածներից, որոնք տուել են մեզ մի քանի եւրոպական և հայ ճանապարհորդներ, զրուածներ, որոնք որպես պատահական առաջարկ հայության մասին աշխատանք են համարվում են: Զէլթունցիների նկարագրութիւնը. Նրանց կեանքի բնադրութիւնները գործ գործը:

Զէլթունցիների նկարագրութիւնը. Նրանց կեանքի բնադրութիւնները, որոնք գործ գործը:

Կախորի տեսութեան մէջ խօսելով Զէլթունի նախկին գաշնակցական կազմակերպութեան մասին յալտնեցինք, որ զէլթունցիները, շնորհիւ իրանց այդ կազմակերպութեան, մատնաւանդ երկրի գերքի, յաճախ պարզել են ապստամբութեան գրոշակը օոմանեան կառավարութեան դէմ, և ներկայ գարու ապստամբութիւն տեղի է ունեցել 4 անգամ — 1819 թ. (այդ ապստամբութեան նկարագրութիւնը կայ Աւետիս Պէրպէրեանի 1871 թ. Կ. Պօլտում Հրատարակված «Հայոց պատմութեան» մէջ), 1861 — 62 թ., 1872-ին և այժմեանը, որ դեռ առ ըսպէիս էլ շարունակվում է:

Հնարաւորութիւննեց գրկված լինելով մանրամասն խօսել այդ ապստամբութիւնների մասին, այս անգամ մէնք կը նկարագրենք զէլթունցիների առտնին, կենցազական կեանքը, սովորութիւնները, փարք ու բարքը, նիստ ու կացը, որոնք ոչ նուազ հետաքրքրական են:

Այս նկարագրի հիմնված չէ անձնական ուսումնասիրութեան վրա, այլ մի քաղուածք է այն մի քանի հազուազիւտ գրուածներից, որոնք տուել են մեզ մի քանի եւրոպական և հայ ճանապարհորդներ, զրուածներ, որոնք ուսումնական անվատական են: Զէլթունի գալուածներ, անձնական անվատական գրուածները մի օտարազգի և օտարերկրեայ ճանապարհորդ էլք կարողացել մուտք գործել Զէլթունի մէջ. անկախ և զդուշ լեռնականները խստիւ փակել էին օտարների առաջ իրանց սարերի և կիրճերի մուտքը:

Նոյն խոկ Վիկտօր Լանգլուան, որ առաջինը մի բնդարձակ հետազոտութիւն գրեց Վիլիկիավի մասին և 1852—53 թուականներին կատարեց մի ճանապարհորդութիւն այդ երկում՝ Նապօլէոն III-ի Հրամանով և հովանաւորութեամբ, հակառակ իր բուռն տեսնչանքի, չը կարողացաւ մուտք գործել Զէլթուն: Ահա ինչ է ասում նա. «Մէր ճանապարհորդութեան առաջին օրը (Սսից դուրս դալուց յիտոյ) մօտեցանք մի հայազգի անկախ իշխանի կալուածներին, որին և յայտնեցի առաջ գնալու և մինչեւ Զէլթուն մտնելու

դիտաւորութիւնս. բայց նա խօրհուրդ չը տուեցինձ, ասելով թէ իր ազգակիցները իրանց երկրի գուները վիակում են որ և իցէ օտարականի առաջ, իսկ գաղտագողի մտնելը վտանգաւոր է»:

Այս պատճառով Լանդլուան ստիպվեց իր տեղեկութիւնները զէլթունցիներին մասին քաղել շրջակայ բնակիչներից։ Ահա մի քանի կտոր այդ տեղեկութիւններից։

«Զէլթունի հայերը կարողացել են միշտ իրանց ազգայնութիւնը պատուել տալ։ Նրանք յարգում են իրանց մեծերին, հպատակում են իրանց օրէնքներին և շատ ամուր են իրանց հաւատի մէջ։ Այդ մասին մի քանի նշանաւոր դիպուած են պատմում։

«Մի երիտասարդ զէլթունցի, լուսաւորչական եկեղեցու կանոններին հակառակ ամուսնանում է երրորդ աստիճանի իր մի ազգականուհու հետ և այդ պատճառով լ բանադրվում է Զէլթունի եպիսկոպոսից։ Երիտասարդը իրան եկեղեցուց դուրս արած տեսներով՝ կատաղում է և մի կիրակի առաւտ, պատարագի ժամանակ, իր տասն կտրիչ ընկերներով, ոտքից մինչև գլուխ սպառագինված, մտնում է եկեղեցին, և այն միջոցին, երբ եպիսկոպոսը սեղանի աստիճաններով վեր էր բարձրանում՝ մօտենում է նրան և մահ սպառնում, եթէ իրան իսկոյն չարձակէ բանադրանքից։

»Զէլթունցիները առ հատարակ բարձրահասակ, քաջ և աշխոյժ բնաւորութեան տէր մարդիկ են։

«Սրանից մի քանի տարի առաջ այս լեռնականները գեսպաններ էին ուղարկել Կ. Պօլիս որպէս զի իրանց և օսմանեան տէրութեան մէջ անկատար մնացած մի զործ աւարտեն։ Բարեկամներիցս մինչը, որ առիթ էր ունեցել այդ լեռնական գեսպանութեան անդամներին տեսնելու՝ ասում էր, թէ հազար զէլթունցի կարող են ամբողջ կարամանիան (Վիլիկիան) տակնուվրաննել, եթէ տիրապետութեան դիտաւորութիւն ունենան։ Այս բանին, ուղիղն ասած, ես էլ եմ հաւատում։ Այժմեան հանգամանքներին նայելով ներուի ինձ կատարեալ ազատութիւն մաղթել Տաւրոսի հայերին, որոնք մարօնիտների հետ Արևելքի ֆրանսիացիներն են»։

Մի այլ օրինակ։

«Սարսափելի կերպով հալածում են ուրացողներին։ 1845 թւին մի քահանայ հակառակութեամբ ուրացել էր հաւատը և ընդունել խոլամ։ զէլթունցիք քերթելով նրա մորթը, կենդանւոյն ալրեցին և առանց քաշվելու պատմում էին այդ ամեն տեղ»։ *)

Սուկայն 1864 թւին մի Փրանսիացի ճա-

*) Ճանապարհորդութիւն Լ. Վանգլուայի։

Նապարհորդի աջողվեց մտնել Զէլթուն և մնալ այսուեղ երեք օր, յունիսի 27—29։ Այս ճանապարհորդին աջողվեց այն պատճառով, որ 1862-ի մեծ ապստամբութեան ժամանակ, երբ դէլթունցիները պատգամասորութիւն ուղարկեցին Պարիզ՝ Նապոլէօն կայսրի մօտ, պատգամաւորներից մինը, Գրիգոր վարդապետ Արարատեան, շատ շնորհ տեսած լինելով Նապոլէօնից՝ յանձն առաւ ֆրանսիացի ճանապարհորդին տանել Զէլթուն, ի նշան երախտադիտութեան։ Ճանապարհորդը, որ լոկ մի տուրիստ էր, նկարագրել է իր տպաւորութիւնները, որոնք իբրև անմիջական տպաւորութիւններ, ի հարկէ, մեծ զին և արդէք տեսնեն։ Հայր Ալիշան իր Սիսուանի մէջ թարդմանած լինելով այդ ճանապարհորդութեան նկարագրութիւնը՝ մենք ևս առաջ կը բերենք այսուեղ քաղուածօրէն։

«Մի քանի ընկերներով, պալասաւորներով, երկու թիկնապահներով, որ տուել էր Մարաշի կուսակալը և մի 16-ամեայ պատանի թարդմանի հետ, որ լաւ գիտէր լեզուները, ուղևորվեցինք դէպի Զէլթուն։ Մի քանի ժամից յետով, երբ նստած մի ձորում՝ հանգստանում էինք, զիմացի բարձրաւանդակի վրա 12 զինված լեռնականներ երևացին. բայց որովհետեւ հրացանները ձգված էին կռնատակով, իսկոյն

իմացվեց, որ բարեկամներ են և ոչ թշնամիներ։ Նրանք արագ իշնելով՝ Զէլթունի իշխանների կողմից մատուցին ողջոյն և հրաւէր, և յայտնեցին, որ ուղարկված են ուղեկցելու հիւրերին։ Բոլոր այդ լեռնականները երկտասարգներ էին. ամենամեծը 25 տարեկանից աւել չէր. ամենքի դէմքը բայց համարձակ, կայտառ, սիրուն, մենք դժուարանում էինք երևակայել, թէ մարդ կարող է որ և է վտանգի ենթարկվել նրանց կողմից առանց պահակախմբի։ Եւ որովհետեւ այդ լեռնականները շատ հռչակված են գիպաձիդ հրացանածգութեան մէջ, ուստի կամենալով փորձել մեզ ճանապարհորդներիս՝ մի փոքր քար զրին հեռու տեղ և խոստացան դիպոնողին մի մէճիտից տալ. ոչ ոք մեզանից չը կարողացաւ զիպցընել. բայց զէլթունցիների հրացանածգութեան եղանակը շատ նշանաւոր երևաց մեզ, որովհետեւ նրանք կատուի պէս մագլցում են ծառի վրա, թագնիքում են տերևների մէջ, ինում են հրացանը միտնիւղի վրա, և ուղիղ արձակում են։

«Նրանց երկրի նման գեղեցիկ երկիր չը կալ; Մեծամեծ սոճներ, ահազին սօսիներ, զալար կաղնիներ հաճելի կերպով հանգստութիւն են, տալիս աչքերին. օձի նման զալարվող վրտակներ, զահավէժ հեղեղներ, ականակիտ և

սառնորակ աղբիւրներ հանգնում են մարդու ծարաւը և պահում են կիրճերը ու կածանները մշտադալար դրութեան մէջ, չը նայելով արեգակը հրատապ ջերմութեան:

«Հրացանները ուրին լեռնականները թափորով առաջ էին խաղում և հասնելով մի մեծ գետի, մխվեցին ջրի մէջ, մրցելով, թէ ով շուտ կանց'ի. կարծես իրանց բնական տարրի մէջ լինէին, որովհետեւ սրբնթաց հռասնքի մէջ կայտուելով խաղում էին: Երբեմն երբեմն ի պատիւ մեզ ուղևորներիս, զէլթունցիները հրացաններ էին զցւմ: Բացց ճանապարհը հետզհետէ դժուարանում էր, և ահա յանկարծ երևացին ուրիշ ձիաւորներ, որոնց զլիսաւորը ճարպիկութեամբ մղում էր իր ամենի երիվարը. նրա պատմուճանը կարմիր ոսկեթել էր, կօշիկները կապուտ, սպիտակ մաշլան (զլիսի քօղ) ծածանում էր քամու մէջ. զէմքն արևակէզ էր: Նա դաշնակցութեան հզօրաւոր մարդկանցից մինն էր — Խօսրօյեան իշխանը (երևի չորս իշխաններից մինը), որը և մի մեծ իշխանի վայելչութեամբ մօտեցաւ ուղևորներիս: Նրա ետևից գալիս էին քաղաքացիների գունդեր, պատուի համար, և ստէպ ստէպ հրացանաձգսութիւններ էին լինում»:

Ապա երկարօրէն նկարագրում է նա, ամեն մի տուն միւս տան համար վեր ելնելու սանտուխ է. փողոցները քարքարոտ են և ծուռումուու. և մեծ զգուշութեամբ պէտք է ման գալ:

անսովոր աշխատանքը, որից յետով վերջապէս հասան ո. Աստուածածնի վանքը (Զէլթունի մէջ) ուղեորն ասում է.

«Ճատ ափսոսում եմ, որ մեր ընդունելութեան միայն մի դժոյն նկարագիրը կարող եմ տալ: Մինչև այժմ էլ լուսմ եմ սարի մէջ թընդացող արձագանքը այն հրացանաձգութիւնների, որոնք կատարվում էին ի պատիւ մեր և ուժգին որոտումների նման էին:

«Երբ վեր ելանք վանքի դատիկոնը, մեզ ողջունելու եկան իշխանները, քահանաները, զօրագլուխները և պաշտօնեանները և նստեցին. զուարթաբարոյ և հարցասէր ծերունի եպիսկոպոսը բազմելով, երբ սեղանը բացին և բերին բրնձեղէն ու կաթնեղէն՝ ասեց. «սա թող փակի մեր բերանը»:

Այսեղ ուղեորը նկարագրում է, թէ ինչպէս ինքը լոշ հացը անձեռնոցի տեղ ընդունելով հաց էր որոնում, յետոյ իմացաւ, որ այդ բարակ լոշը ոչ միայն հաց է, այլ և զգալի ու պատառաքաղի տեղ է ծառայում զէլթունցինների համար:

«Քաղաքում, շարունակում է նա, ամեն մի տուն միւս տան համար վեր ելնելու սանտուխ է. փողոցները քարքարոտ են և ծուռումուու. և մեծ զգուշութեամբ պէտք է ման գալ:

Քաղաքի հիւսիսալին-արկմտեան կողմում մի անդունդ է բացում, որտեղ հոսում է մի գետ։ այդ գետի ափերին գտնվում են բացօթեալ վայտաշէն լողարաններ, որտեղ կանալք լողանում են բաց և մերկ, և, ինչպէս ասում էր իշխանը, «ոչ ոքի մտքից չար բան չէ անցնում, որպէս եւ մերկ»։

«Զէլթունցիների բարքը և բնաւորութիւնը բարի են, ոչ ոքի նրանք չեն պահնի զողութեան համար։ Այնքան օրինապահ են, որ նրանց երկրում ամեննեին բանտ չը կայ. բայց եթէ մէկը մի մեծ յանցանք գործի, աքսորում են իրանց երկրից զուրս, և եթէ զդում է՝ վերադարձնում են ու փակում մի վանքի մէջ ապաշխարելու համար։

«Տղամարդիկ երկաթ են դարբնում, կանալք շերամի որդն են դարձանում. երեխանները դրաց են գնում մինչև տասը տարեկան ժամանակ և թեթև ուսում են առնում։ Կրօնապահութեան մէջ շատ խիստ են։

«Երբ կամենում են նոր կարգ կամ ուղղութիւն մտցնել ժօղովում են քահանաներին և յայտնում են իրանց պահանջները կամ պէտքերը. քահանաները զումարում են ծերունիներին և յայտնում են ժողովրդի խնդիրը. նրանք քըն-

նում են, և ինչ որ լաւ է թվում՝ հաստատում են։ Գործադիր իշխանութիւնը յանձնված է չորս իշխանների, որոնք ընտրվում են կամ տոհմի, կամ հանճարի առաւելութեան համար, և միայն իրանց հայրենասիրութեան և քաջութեան պատճառով են կարգվում ժողովրդի զուլի, և ժողովուրդը կարսդ է մերժել այդ իշխաններին եթէ որ և է յանցանք ունենան։

«Պատերազմի ժամանակ զինուրակոչ են անում և հաւաքում են 7—8000 պատերազմողներ, 16 տարեկանից սկսած մինչև 65 տարեկանը, և ամեն մինը իր հաշուին է զինաւորվում։ Նրանք ունեն և երգում են մի պատերազմական երգ, որ Լանգլանան թարգմանել և հրատարակել է»։^{*)}

„Վագեցէք, եղեալիներ, եկէք լսելու մեր քաջագործութիւնների պատմութիւնը։ Եկէք լսելու, ինչպէս անօրէն խուրցիցը, որ կամենում էր մեզ կոտորել, խորտակեց։

„Անօրէնը վճռել էր ջնջել մեզ, յափշտակել մեր կանանց, մեր երեխաններին և մեր գուլքը։

„Բայց թող նա յուր չը դնի իր հագարաւոր զօրքի վրայ։

*) Զեռքի տակ ՚զունենալով այդ երգի հայերէն բնագիրը, այսուղ առաջ ենք բերում նրա թարգմանութիւնը Փրանսերէնից։

„Թող նա ալսուետե դողաց մեր առաջ և թող Մարաշի գօրքը նոյնպէս սովորի լարգել երդման ուխտը:

„Ողջո՞ն մեր պետերին և զօրավարներին, որնք առաջնորդեցին մեզ դէպի ճակատամարտ, ողջո՞ն մեր իշխաններին: Կեցցէ մեր հայրենիք. և այն, և այն“:

Երեք օր Զէլթունում մնալոց և սիրալիք ընդունելութիւն գտնելուց յետոյ, ուղևորները նոյն պատիւներով ու հրացանաձգութիւններով ճանապարհ դրվեցին դէպի Մարաշ: Երբ նրանք կամեցան դրամական մի վարձատրութիւն տալ իրանց ուղեկցող երիտասարդներին, սրանք ասացին: «Նախատինք է այդ մեզ համար»: Երբ մենք թախանձեցինք, որ գոնէ վեր առնեն և բաժանեն աղքատներին, իբրև ողորմութիւն ուղին տոփին և տոփին եալիսկոպուին: Իսկ մեզ ուղեկցող չորս երիտասարդները, խոժոռ աչքերով նայելով մեր թուրք թիկնապահներին, վերապարձան Զէլթուն, սկսելով երգել իրանց պատերազմական երգը, որից մեր երիվարները աշխուժութեամբ և խրոխտութեամբ վառվեցին:

«Չենք կարող մեր երախտազէտ սքանչացումն չը յայտնել Տաւրոսի այդ քաջ զաւակներին, նրանց աչալուրջ սպասաւորութեան և արիութեան համար»:

Զէլթունի երիտասարդների քաջութեան համբաւը այդ միջոցին արդէն շատ տարածված էր, մանաւանդ Բարիկ իշխանի գործած քա-

ջութիւններով, 1862 թւի ապաստամբութեան ժամանակ: Բարիկ իշխանը Զէլթունը կառավարող չորս իշխաններից աւազազոյնի — Եէնի Տունեան Աստուածատուր իշխանի եղբօրորդին էր և վերջը, իբրև պատանդ մնալով Մարաշ՝ Աշիրփաշայի կողմից սոսկալի տանջանքների ենթարկվելով, բանտի մէջ թունաւորված մեռնում է: Բարիկ իշխանը մինչև այժմ էլ զէլթունցի երիտասարդների համար համարվում է քաջութեան տիպար:

Այս բոլոր նկարագրութիւնները ցոյց են տալիս որ մինչև 1865 թւի ապաստամբութիւնը, որի հետեւանքը եղաւ Զէլթունի անկախութեան բարձումը և նուաճումը՝ զէլթունցիները, փակված լինելով իրանց անառիկ սարերի մէջ, հաղորդակցութիւն չունենալով արտաքին աշխարհի հետ և թող չը տալով օտար տարիերին մտնել իրանց մէջ՝ ներկայացնում էլին մի չարքաշ, պարզ, նահապետական, բարոյական ժողովուրդ, որ բաւականանում էր շատ քչով, իր ձեւքով վաստակում էր իր պարզ ապլուստը և ապրում էր ընտանեկան ու նահապետական կառավարութեան ներքոյ:

Ավական այդ թւականից յետոյ Զէլթունը կերպարանափոխութիւն է կրում. չը կարողանալով առաջվայ պէս փակել իր մուտքը օտար-

Ների — թիւրքերի առաջ, նրա ընտանիւ և բարոյական կենցաղը հարուած է կրում, և առողջարար, թարմ օդ շնչող, առողջ կեանք վարող երիտասարդութիւնը տկում է մինչև անգամ «սիֆիլիտ» ախտով հիւանդանալ. թէև ոմանք այս հանգամանքը բացատրում են նրանով, որ թուրքաց կառավարութիւնը, կամենալով ուժասպառ անել Զէյթունի երիտասարդ տարրը, մի դժոխափն միտք լրացաւ և իրազործեց, անա 70-ական թւականներին ուղարկեց Զէյթուն սիֆիլիտով վարակված բաղմաթիւ կանալք և տղամարդիկ, որոնք և տարածեցին այդ սովկալի ախտը:

Անօգուտ չենք համարում դնել, այստեղ չորս լշխանական տների ներկայացուցիչների անունները:

- 1) Եէնի-Տիւնեաբան Աստուածատուր:
- 2) Սուրէնեան Մարտիրոս. այս տոհմը իրան սերած է համարում Գրիգոր Լուսաւորչաց:
- 3) Ճոփեան Ղազար և
- 4) Յակոբեան կամ Եաղուբեան Մկրտիչ:

Վէյթունի սովորութիւնները, կենցաղը, բարքերը, հագուստը:

Նկարազընք այժմ զէյթունցիների ընտանեկան և կենցաղական սովորութիւնները, մեզ առաջնորդ ունենալով Ալլահիվերդեանի «Ուլնիա» աշխատութիւնը:

Ֆնունդ: Երբ երեխայ է ծնվում, զէյթունցիք խսկոյն լուանում են նրան, աղում, ասելով. «Օղը շոտ քարէ, եռոր պօլուզը պղնտնը», այսինքն «աղը շատ ցանէ, որ տղան պինդ լինի»: Անմիջապէս ազգականները և դրացիները գալիս են շնորհաւորութեան և հետերը իբրև ընծայ բերում են հափուսոց, որ օպալից և ռուփից շինած քաղցրեղէն է, և այդ շարունակում է մինչև մկրտութիւնը: Մկրտութիւնից յետոյ բրինձից շինած թանձրապոր կամ ձաւարով լցված որսի միա են բերում իբրև ընծայ: Կնքահայրը պէտք է իր հետ բերի անպատճառ մի կանգուն դութնու (կարմրագյն կերպաս) և կամ երկու կանգուն տպածոյ

— կոնկուդ: Ծնողները մի այծ մատաղ անելով, սեղան են պատրաստում. եթէ ծնվածն առու է, սեղանը ճոխ և առատ է լինում և հրաւիրվածները շնորհաւորում են օղի կամ գինի խմելով և ասում են. «Ապրոծ զավօվիդ մընացակոն ենէ, ըշնէհէավիւր նը», իսկ եթէ աղջիկ՝ սեղանը շատ աղքատ է լինում և հիւրերը միսիթաբում են ծնողներին ասելով. «Մի տրտմիք, Աստուած ստեղծած է, չէ մի որ աղջիկ զաւակն մեզ տանուտէր է անում»:

Նորածին երեխայի մայրը մինչև 40 օր պէտք է արևելի երես չը տեսնի. տան երդիկը և բոլոր լաւսամուտները փակված են մնում և միայն երեկոյեանները մայրը կարող է գուրս գալ: Սովորական անուններն են՝ տղաների համար—Գուգուր, Աբուտուր կամ Աստուր կամ Աբելէ, Սարգէս կամ Գաղաս, Ռւհօն կամ Հանսէս, Խէջր, Մինոյ, Գէալիւց, Հազօր, Աւտիք, Գիւգիւր կամ Գէհիւրք, այսինքն Գրիգոր, Աստուածատուր, Սարգիս, Յովհաննէս, Խաչատուր, Մնացական, Գալուստ, Ղազարոս, Աւետիք, Գէորգ: Իգական անուններն են—Զարմօն, Գարանէ, Ճուշոն, Գշխօն, Մարիամ, Սարօ կամ Սարիկ, Հէղնիկ, Հոսփիկ, Անազօն, Ասանէթ, Զոհալ, Եթեր, Յաթըն, Օշլօֆի, Թամամ և այլն: Նշանադրութիւն և հարսաւ-

նի ք: Զէլթունցիների մէջ տիրապետում են նոյն նահապետական սովորութիւնները նշանադրութեան և հարսանիքի վերաբերմամբ, ինչ որ Հայաստանի շատ տեղերում:

Երիտասարդների բախտը տնօրինում են ծնողները, թէև Զէլթունում, իբրև լեռնական երկրում, աւելի ազատութիւն է տիրում երկու սեռի յարաբերութիւնների մէջ, քան այլ տեղերում: Սովորաբար, եկեղեցում, կանայք միմեանց հանդիպելով խօսք են դցում և համաձայնութիւն կայացնում աղջկայ և տղայի մասին: Գրանից յետոյ տղայի ծնողները մատանի են ուղարկում աղջկայ ծնողներին քահանայի միջոցով, և ապա կատարվում է բուն նշանագրութեան հանդէսը: Ահա ինչպէս է նկարագրում այդ հանդէսը ականատես Ալլահվերդեանը:

«Ուրբաթ՝ առաւօտեան, մի կտրիճ մարդ ձայն է տալիս թէ մեր թաղը պէտք է գնայ իր իւ ը ս ը մ ը բերի միւս թաղից, հրամեցէք. Եկեք: Ճարապթ՝ առաւօտեան, նշանած տղայի կողմի մարդիկ պատրաստում են օ ո ո ւ գ-ապուր (բրնձէ ապուր). յետոյ մորթում են մի տաւար, եփում են և լցնելով պղնձի մէջ, վեր են առնում հայ, մի կարաս զինի, մի աման օղի և գնում են աղջկայ տունը: Այդտեղ արգէն տան առաջ կամ տանիքի վրա փոած են լինում

ճուլ, նրա վրա քէչա, դեօշիկ, յետոյ գորզ գեր: Ամենքը կարգով նստում են. բերում են սինիների մէջ մսով սօղանլու, քուֆտէ, մեղրով տապկած հաւկիթ, պաստըրմա, դոլմա, հափրատ և ոռուգ-ապուրը: Այդ բոլորը ուտելուց յետոյ մէկը վերէ առնում մի սինի և պտտցնում է. ամեն մարդ իր կարողութեան համեմատ փողէ դյում. հաւաքած դրամը յանձնում է փեսալին, որը ոսկիների լերածելով, տալիս է նշանածին, ճակատից կախ տալու համար»:

Հարսանիքից առաջ, փեսացուի ծնողները գնում են հարսնացուի տունը իմանալու հարսնացուի ծնողների պահանջը: Ճատ անգամ այդ պահանջները, որոնք լինում են որոշ քանակութեամբ ոսկի դրամ և ընծաներ ստանալու մասին, պատճառ են լինում, որ հարսանիքը կամ յետաձգվում է, կամ բոլորովին քանդվում է: Պէտք է ընծաներ տալ—կօշիկ, դըրմը գալու, թաշկինակ և այլ շորեր հարսնացուի հօրը, մօրը, եղբայրներին, քոյլերին, ազգականներին, մի խօսքով ամբողջ խըռանին թշախին — ընտանիքին և մինչեւ անգամ դրացիներին:

Զէյթունում չայաստանի շատ տեղերի նըման սովորութիւն է դարձած ամուսնացնել աղջկան 12—13 տարեկան հասակում:

Մահ և թաղում: Երբ հիւանդը մահամերձ է դառնում, ազգական և դրացի կանաչը «լը զըլը, լը զըլը» (այս աղջիկ, այս հարս) ասելով լցվում են հիւանդի տունը և ոկում են ողբալ. «աման քիրիք, մերի տունիս կո կաւրը, արիւիկես կո խաւարը չիրք պիտ էնիմ, չոց պիտը ընիմ» (ով քոյլեր, մարեր, տունս կաւերի, արես կը խաւարի, ինչ պիտի ընեմ, ինչպէս պիտի անեմ):

Մեռելին լողացնելու ջուրը տաքացնելու համար կրակը վեր չեն առնում օջախից, այլ յատկապէս «ըսահոնք» (չախմախ, հրահան) են խփում և նոր կրակ վառում. չորն էլ տան մէջ չեն տաքացնում, այլ գուրսը և գիակը լուանալոց յետոյ կաթսան ու եռոտանին գարձնում են հակառակ կողմը, իսկ խանծողները զցում են փողոց և ամեն մարդ զգուշանում է վրան կոխ տալուց: Մեռելի վզից կախ են տալիս մի կանգունաչափ ոլորված հաստ թել, որ կոչվում է «խետուկ չուանըլկ»: Յուղարկաւորութեան ժամանակ դէպի գերեզմանուունը կանանց մի մեծ բազմութիւն դագաղի եռեկից գընալով, ննջեցեալի հագուստները ձեռքին բռնած խաղում են և երգում են տեղական եղանակներ:

Զէյթունցիները սուգ չեն պահում. մի շաքաթից յետոյ այրին, թէ տղամարդ և թէ կին,

կարող է ամուսնաթնալ։ Մինչեւ 6—7 անգամ
ամուսնացողներ են լինում։

Դեռ հիւանդը չը մեռած, հողեարքի ժա-
մանակ, իբրև միսիթարութիւն հետեւալ խօս-
քերն են ուղղում մնացող ամուսնուն. «Երք
տէարոտ կո կենիս լր քիրիս, ըսկըրը տրդոց չէ
պէարպը» կամ թէ «Երք դաշու կո կենիս, չի
նը էաս կընըկը նը՝ թուղ նը հուօտ մ'էա»։

Հազուստում։ Տղամարդկանց հազուստը
բաղկացած է մի վարտիքից և մի երկար շա-
պիկից, որի ծայրերը շատ լայն են և անկիւն-
ներում ծովեր ունեն. Երբ շապիկը հազնում են,
այդ ծովերը իրար կապելով գցում են զլիսի ե-
տեւ։ Ջապիկի վրայից հազնում են ասիական
տպածոյ մի պարեզօտ, որի առաջին քղանցք-
ները կոխում են մէջքին կապած գոտու մէջ։
Այդ պարեզօտու վրայից հազնում են ա մ դ ա ն,
չուխայից կարած, և ձմեռն էլ հաստ ասուե-
ղէնից կարած արա, որ գործվում է Մարա-
շում։ Ամառը և նոյն խոկ ձմեռը մեծ մասը բո-
կոտն են մանգալիս, մանաւանդ տղաները և
երիտասարդները։ Գլխին դնում են կարմրագոյն
ֆէս, իրար վրա մինչև 5 հատ գարսած, վր-
րայիցն էլ կապում են տրապօլսի կոչված
գոտի կամ գանազան գոյների թաշկինսկներ
5—6 հասու։ Կօշիկները, որոնք կոչվում են

«փոտոալ», ընդհանրապէս կարմրագոյն են լի-
նում և տրեխների նմանութեամբ են՝ կաշուի
կապերով և զանազան պաճուճանքներով։ Ամա-
ռը, երբ գէյթունցիները որսորդութեան կամ
այլ զբաղմունքների պատճառով յաճախ զնուժ
են սարերը, մազլցում են ժայռերի և անհարթ-
ու ապառաժոտ բարձրաւանդակների վրա, որ-
պէս զի փառատալները երկար դիմանան, տակից
կարում են խողի կաշի։ Սովորաբար, զիսի մա-
զերն ածիված են լինում, միայն գագաթին մի
երկար ծամ են թողնում, որ բաժանում են մի
քանի մասերի և հիւսում կանանց պէտ։ Ճա-
տերը կինս ևս դնում են։ Ականջներից արծա-
թէ կամ արոլքէ օղակներ են կախում։

Կանալք հազնում են սպիտակ կամ թանձը
կտակից մի երկար շապիկ, կուրծքը բաց և Մա-
րաշի զոյնզգոյն կտակից վարտիք, վրայից մի
պարեզօտ, որի կուրծքի և թևերի եղբերը մե-
տաքսիալ ժամանէներով զարդարված են լի-
նում. մէջքին կապում են 6 կանգունաչափ գո-
տի և այդ հագուստի գրեթէ ամեն կողմերից՝
լանջից, թիկունքից, կողքերից կախում են 4—5
կարդ արծաթեալ սրածար զնդակներ և զանա-
զան հմայեակներ, խոկ բագուկներին ապարան-
ջաններ. ականջներում օղեր ունեն միայն աղ-
ջիկները, որովհետեւ ամուսնացած կանալք գըլ-

խին այնքան կապոյներ և լաթեր են փաթաթում, որ միայն աչքերը, քիթը, բերանը և դուրս ցցված այտերն են երեռում: Մէկ մէկու վրա մինչեւ 10—20 կարգ դանազան գոյնդզոյն կտաւներ են կապում և ճակատից դուրսշնոյ տվկիներ կամ բենէ զներ են շարում, Ղարաբաղի կանանց պէս: Ամեն մի կնոջ զլսին մօտ 40—50 կանգուն շորեր են լինում փաթաթված: Մէծ ամօթէ է համարվում կնոջ համար ծնօտը ցոյց տալը կամ բաց թողնելը: Աղջիկները, նոյն իսկ հարսնացուները աղատ են այդ փաթաթներից և մինչեւ ամուսնութիւնը բացերես և աղատ են մանդալիս:

Թէ կին, թէ աղջիկ իրանց գոտիներից արորի շղթայի վրա կախած տնեն մի փոքր դանակ: Ընդհանրապէս, թէ կին, թէ աղջիկ բռկուն են մանգալիս, միայն հանդիսաւոր օրերում հագնում են դեղին կամ կարմիր չմուշկներ:

Կ են ց ա զ ա վ ա ր ո ւ թ ի ւ ն: Զէլթունցիները ընտանեկան կեանքի մէջ խխտ պարդ, նահապետական և չարքաշ են: Ապրում են միասին, մեծ թւով, մի և նոյն հալրական տան մէջ մի քանի ամուսնացած եղբայրներ, իրանց ամուրի եղբայրների և քոյքերի հետ, պառկում են բոլորը մի և նոյն ծածկի տակ, իսկ ամառը տանիքի վրա: Միայն երբ հիւրեր են լինում,

իգական սեռը գնում է պառկելու ամբարտում: Պարզութիւնը հասնում է մինչև այն աստիճանի, որ թէ տան մէջ, թէ դուրսը՝ լոզարաններում, չափահաս տղամարդիկ, երիտասարդներ, հարսներ և աղջիկներ լողանում են միմեանց աչքի, առաջ, առանց շորի, բոլորովին մերկ: Սապօնի տեղ գործ են ածում կաւ և տուղտ ծաղիկը, որ ամառը հաւաքում են սարերից և շորացնում:

Զէլթունցիները չեն սիրում պանդիստութիւնը և շատ հաղիս է պատահում, որ մէկը հեռանայ իր հալրենիքցից: Նրանց զիխաւոր պարապմունքներն են՝ այզեզործութիւն, որսորդութիւն, ոտայինանկառաթիւն, երկաթագործութիւն, մասամբ երկրագործութիւն և ջորեպանութիւն: Բայց այդ բոլոր պարապմունքներն էլ կատարվում են այն չափով, որքան հարկաւոր է իրանց ասլրուստի, հագուստի և զէնքերի համար. միայն ջորեպանութիւնն է, որտեղ նրանք դրամ են աշխատում: Ալզեղործութիւնը զիխաւորապէս կայանում է խաղողի բերքի մէջ. շատ տեսակ խաղողներ կան, որոնցից պատրաստում են դանազան սուճուներ, ռուփ, ընտիր չամիչ, զինի և օղի՝ իրանց տարեկան ուտեստի և պաշարի համար: Աւելորդ չամիչը, ոռոփը տանում են Ալբիստան և Մարաշ և այդտեղ փոխանա-

կում են ցորենի, բաժբակի և ծխախոտի հետ։
Որսորդութեան մէջ, իբրև լեռնականներ, շատ
հմուտ են. որսում են մեծ քանակութեամբ իա-
քաւ և սպանում են արջեր։

Բ ն ա ւ ո ր ու թիւն։ Իբրև լեռնական-
ներ, զէյթունցիները միամիտ են, քաջ, պա-
տերազմասէր և սաստիկ վրէժխնդիր։ Վրէժխն-
դրութիւնը նոյնպիսի արմատացած զգացում է,
ինչպէս քիւրդերի և չէրնօգօրցիների մէջ։ Նա
ցեղական է, սակայն արեան զինը դրամով ստա-
նալու սովորութիւնը ևս կայ, այնպէս որ վրէ-
ժը երկու տեսակ է լուծվում, կամ «ակն ընդ
ական և ատամն ընդ ատաման», կամ հաշտու-
թեամբ՝ որոշ փրկանքի միջոցով։

Հաշտութիւնը հետեւալ կերպով է կատար-
վում. — Հաշտարանները միջամտում են և սպան-
վածի ախրոջ հաճութիւնը առաջուց ստանալով,
մարդասպանի հետ գնում են նրա տունը. մար-
դասպանը իր հետ տանում է Շ կանդուն կտաւ,
ճիշդ այնքան, որքան պէտք է պատանքի հա-
մար, և երբ մօտենում է ոպանվածի տանը, այդ
կտաւը փաթթաթում է զիլիին և ընկնելով տան-
տիրոջ ոտքերը, առում է. «Հասիլ ի՞ո հասիկ
պատոնքիս, չիրք կուզիս էրօ»։ Նա էլ պատաս-
խանում է. «Քոն ըչ պիտը էնը, չիրք էր էատ
զահմոթնու քէշոցիր», և երբ միջնորդները շատ

թախանձում են՝ վերջապէս ներում է խօսքե-
րով. — «դոն իմ տեղէաս իս, պիտը սպանէա նը՝
բան չեմ էնի ալ»։

Փրկանքը բաղկանում է մի քանի զոյլ
փօստալից (կօշիկ), մի խոնչից և մօտ 1000
կամ աւելի, նայելով կարողութեան, զահեկան
զրամից։

Եթէ երկու երիտասարդի, կամ երկու տան
մէջ վէճ և թշնամութիւն կայ, հակառակորդ-
ներից մինը գիշերով գաղտազողի մտնում է միւ-
սի տունը և նրա քնած ժամանակ՝ նրա բար-
ձի մօտ գնում է վառող և գնդակ. նշանակու-
թիւնն այս է. «ահա եկայ մօտդ և ամեն մի-
ջոց ունէի քեզ սպանելու, բայց չը սպանեցի,
ուրեմն գաղարիր ինձ հակառակելուց»։

Կամ թէ հակառակորդներից մինը գիշե-
րով գողանում է եկեղեցու բազից զազալը և
տանում է իր թշնամու գուռն ի վեր կանգնե-
ցնում. այդ սպաննալիքը նշանակում է. «զ ք ի զ
լ է շ փ ե տ ի ն վիրէան կը հանիմ» (քեզ գազա-
ղի վրա կը հանեմ)։

Բացի զրանից մտնում են միմեանց ալզի-
ները և որթերը արմատից կտրում, կամ ալբում
են տները, կտրում են եղի, ձիու, ջորու և էշի
պոչերը և ականջները, քարկոծում են միմեանց

տները, խափանում են ջաղացը՝ խողովակների
մէջ քար զցելով և այն:

Ելբ այս բոլոր նախազգուշութիւնները չեն
օդնում, այն ժամանակ թշնամութիւնը կամ
վէճը վերջանում է սպանութեամբ:

Իբրև խաւար և տղէտ ժողովուրդ, դէյ-
թունցիները բազմաթիւ աւելորդապաշտութիւն-
ներ և նախապաշտումներ ունեն՝ հեթանոսա-
կանը և քրիստոնէականը միասին խառն, և
նրանց համեմատ զործ են ածում զանազան
յուռութներ, հմայիլներ և այն: Բայց այդ յու-
ռութների մէջ ևս փայում է պատերազմանի-
րական ոգի. այսպէս, օրինակ, երեխաների զըլ-
խից կախում են արծուի մաղիլները, արծա-
թազօծած չար աչքից պահպանելու համար:



7382

0003486

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0003486

ԳԻՆՆ կ 20 ԿՈՊԵԿ